Սոյն գիրքը կը հրատարակուի
աջնիւ մեկենասութեամբ

ՊԵՐՃ ՌԻՉԸՐՏ ՍՎԱՋԼԵՄՆԻ

Ի յիշատակ իր սիրեցեալ մօր՝

ՌԵԲԵԿԱ ՍՎԱՋԼԵՄՆԻ

«Ով որ ինծի միացած է եւ ես անոր՝
անիկա առատ պտուղ պիտի տայ»։

(Յովհաննէս 15։5)

ՍԲ. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՊՏՈՒՂՆԵՐ

(Քարոզներ եւ Ճառեր)

St. John Chrysostom - The Fruits of Repentance
(Sermons and Homilies)

ԱՄՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
«ՈՍԿԵՂԵՆԻԿ» ՄԱՏԵՆԱՇԱՐ
-Ա-

ԼՈՍ ԱՆՋԵԼԷՍ, 2019

ՀՏԴ 27-475
ԳՄԴ 86.37
Յ 630

Սբ. Յովհան Ոսկեբերան
Յ 630 **Ապաշխարութեան պտուղներ**: Քարոզներ եւ Ճառեր/ Սբ. Յովհան Ոսկեբերան; Գրաբարից աշխարհաբար փոխադրեց՝ Նորայր Պօղոսեան; ԱՄՆ Արեւմտեան թեմ.- ԱՄՆ: 2019.- 125 էջ (ԱՄՆ Արեւմտեան թեմի «Ոսկեղենիկ» մատենաշար, Ա):

Գրքում ներկայացուած են Յովհան Ոսկեբերանի քարոզների եւ ճառերի՝ գրաբարից աշխարհաբար թարգմանութիւններ: Դրանք նուիրուած են ապաշխարութեանը, ողորմութեանը, խոստովանութեանը, քրիստոնէական այլ առաքինութիւնների:

ՀՏԴ 27-475
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-0-2932-0

© Պօղոսեան Նորայր, 2019
© ԱՄՆ Արեւմտեան թեմ, 2019

ՍՐՏԻ ԽՕՍՔ

Յովհան Ոսկեբերանի պատգամներու ներկայ հաւաքածուն յիրաւի հրաշալի առիթ կ'ընծայէ քրիստոնեայ հաւատացեալին՝ սնուցանելու իր հոգին քրիստոնէական հոգեւոր ու բարոյական արժէքներով, որոնք կը լուսաւորեն մեր ողջ էութիւնը եւ՛ ֆիզիկապէս, եւ՛ հոգեւորապէս, որպէսզի մաքրութեան մէջ տեսանելի դառնայ Աստուծոյ ներկայութիւնը:

Բովանդակութեան մէջ ներկայացուող ութ նիւթերը հոգեւոր սերտողութեան ներշնչող ընթերցումներու ամփոփում են, որոնք մեզ կը կտրեն ժամանակի ու տեղի հասկացութիւններէն եւ կը տանին միացնելու Արարիչ Աստուծոյ հետ:

Մեր համեստ կարծիքով՝ ներկայացուած հոգեւոր խրատականը կ'արժէ ի ձեռին ունենալ Մեծ պահքի ժամանակահատուածին, որպէս ու-

ղեցոյց հոգեւոր ճանապարհորդութեան, որուն աւարտին պիտի հանդիպինք Աստուծոյ հետ:

Ներկայացուած աշխատութիւնը աղօթքի համազօր ուժականութիւնը ունի, որուն գրաբարէ աշխարհաբար թարգմանութիւնն է կատարած Տիար Նորայր Պօղոսեան:

Ո՛վ քրիստոնեայ հաւատացեալ, յանձնառու եղիր Աստուծոյ ձեռքերու մէջ եւ յոյսդ դիր քեզի տրուած հաւատքի շնորհին վրայ եւ ապա միայն լուսաւորէ հոգիդ Յովհան Ոսկեբերանի խրատներով, որպէսզի դառնաս աստուածային սիրոյ փարոս բոլորին համար անխտիր:

Օրհնութեամբ՝

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի

Արեւմտեան Հայոց թեմի

ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԵՒ «ՈՍԿԵՂԵՆԻԿ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՄԱՍԻՆ

Սիրելի ընթերցողին ենք յանձնում համաքրիստոնէական սուրբ հայրերից Յովհան Ոսկեբերանի երկերի աշխարհաբար թարգմանութիւնների մի ժողովածու:

Յովհան Ոսկեբերանը (St. John Chrysostom) ապրել է մօտ 347 - 407 թուականներին, քրիստոնեայ եկեղեցու ընդհանրական ամենից յայտնի սուրբերից եւ մատենագիրներից է: Պատանի տարիներին սովորել է Անտիոքի նոր մկրտուածների դպրոցում, քրիստոնէութեան դասերին զուգահեռ նշանաւոր հռետորների և իմաստասէրների մօտ ուսանել է փիլիսոփայական գիտութիւններ: Տասնութ տարեկանից եռանդով զբաղուել է Սուրբ Գրքի և աստուածաբանութեան ուսումնասիրութեամբ, յետոյ Անտիոքի մօտակայ լեռներում՝ քարայրի մէջ, երկու տարի անձնատուր եղել ճգնաւորական խստակեցութեան:

Ընտրուել է Կ. Պոլսի պատրիարք, ծաւալել է աղքատախնամ գործունէութիւն, Անտիոքի եկեղեցում նրա հոգածութեամբ ամէն օր կերակրուել են երեք հազար որբեր, այրիներ, բանտարկեալներ:

Հարուստ է Յովի. Ոսկեբերանի մատենագրական ժառանգութիւնը, գրել է մեկնութիւններ, ճառեր, քարոզներ, ներբողներ, դաւանաբանական երկեր, նամակներ եւ այլն: Դրանք միջնադարում «եղել են հռետորական խօսքի, եկեղեցական բեմբասացութեան դասական չափօրինակ» (Յ. Քեօսէեան): Ոսկեբերանի քարոզներն աչքի են ընկնում հռետորական բարձր արուեստով: Սիրելի ընթերցողն ինքն էլ կարող է համոզուել, թէ ինչպէս հատու է Ոսկեբերանի լեզուն եւ միեւնոյն ժամանակ՝ պարզ, ոգեղէն է եւ՝ մտերմիկ: Յատկապէս իր պերճախօսութեան եւ հոգենիւթ քարոզների համար է, որ ստացել է «Ոսկեբերան» մականունը:

Նրա երկերից շատերը հայերէն են թարգմանուել 5-րդ դարի սկզբին՝ գրերի գիւտից եւ Աստուածաշնչի թարգմանութիւնից անմիջապէս յետոյ: Գրաբար պահպանուած Ոսկեբերանի շատ երկեր, ժամանակով մօտ լինելով բնագրին,

այսօր ձեռք են բերել սկզբնաղբիւրի արժէք: Բացի դա, Ոսկեբերանի երկերից մի քանիսը պահպանուել են միայն հայերէն թարգմանութեամբ եւ այդպիսով ստացել են բնագրի արժէք: Օրինակ՝ Եսայու մարգարէութեան մեկնութեան յունարէն բնագրի մեծ մասը կորած է, եւ հայերէն թարգմանութիւնն է ամբողջական աղբիւրը: Միայն հայերենով են պահպանուել՝ Եզեկիէլի, Ամբակումի մարգարէութիւնների, Մարկոսի, Ղուկասի Աւետարանների, Կաթողիկէ թղթերի Ոսկեբերանի հատուածական մեկնութիւնները, բազմաթիւ ճառեր:

Ողջ միջնադարում Ոսկբերանը սիրուած, ամենից ընթերցուած եկեղեցու հայրերից մէկն է եղել: Իր երկերում մշտապէս ու եռանդով պախարակել է քրիստոնէական կենցաղից հեռացած, անբարոյ կեանքով ու վէճերով ապրող մարդկանց բարքերը, խստութեամբ քննադատել արքունական զեխութիւնները՝ ցոյց տալով քրիստոնեային վայել կեանքի ուղին: «Նոր կեանքի իմաստը, քրիստոնէական վարդապետութեան համաձայն, բարոյական տուեալներով լեցուն կեանքն է, ընտանեկան մաքուր սիրով ապրելու յարատեւութիւնն ու պահպանումը», մի առիթով նշել է Տ.

Յովնան Արք. Տէրտէրեանը: Եւ այդ՝ դէպի քրիստոնէական բարոյականութիւնն ուղղորդող ճանապարհը գտնում ենք Յ. Ոսկեբերանի ճառերի ամէն մի պարբերութեան ու տողի մէջ: «Բարի է Աստծոյ ողորմութեանն ապաւինելը, միայն դարձի՛ր դէպի Նա, որպէսզի Փրկիչն էլ մեղաւորիդ դարձի բերի», յորդորում Սուրբ Յովհան Ոսկեբերանը:

* * *

Մեծ ուրախութեամբ պիտի նշենք, որ Ոսկեբերանի երկերի ներկայ ժողովածուի հրատարակութեամբ Արեւմտեան թեմը Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի առաջնորդութեամբ եւ օրհնութեամբ հոգեւոր գրականութեան նոր՝ «Ոսկեղենիկ» մատենաշարի մեկնարկ է տալիս:

Մատենաշարը ներկայացնելու է մեր գրաւոր անսպառ ժառանգութեան ինքնուրոյն եւ թարգմանական էջերը, որոնք ստեղծուել են Ոսկեդարում, դրանից յետոյ, նաեւ մեր օրերում: Այն յաւելեալ մէկ հնարաւորութիւն է Աստծոյ պատգամը ընթերցողին հասցնելու համար: Եւ ուրախ ենք, որ մատենաշարի անդրանիկ պրակը իր էջերը բացում է յատկապէս հռչակաւոր Յովհան Ոսկեբերանի երկերի ներկայացմամբ:

Վերջին շրջանում փորձեր եղել են Ոսկեբերանի որոշ երկեր՝ քարոզներ, ճառեր, հայերէն թարգմանելու եւ ընթերցողին ներկայացնելու համար: Սակայն վստահ ենք, որ համաքրիստոնէական հայրապետի անպարփակ ժառանգութիւնը անընդհատ բազմապատկելու եւ ընթերցողին մատուցելու կարիք ունի: ԱՄՆ Արեւմտեան թեմը, Առաջնորդ Սրբազանի հոգածութեամբ, ներկայացնում է Յովհան Ոսկեբերանի հոգեւոր գրականութեան եւս մէկ էջ, քարոզների եւ ճառերի մի փունջ՝ նուիրուած քրիստոնէական առաքինութիւններին, ողորմութեանը, աղքատսիրութեանը, ապաշխարութեանը: Դրանք ի մի են հաւաքուած «Ապաշխարութեան պտուղներ» ընդհանուր խորագրի ներքոյ, որ խտացուած արտայայտում է Ոսկեբերանի այս քարոզների ոգին, որ նաեւ գալիս է Աւետարանական խօսքից՝ «Այսուհետեւ ապաշխարութեան պտուղներ տուէ՛ք» (Ղուկ. 3. 8): Եւ Ոսկեբերանն ասում է՝ «Ապաշխարութիւնը լուանում է հոգու աղտեղի մեղքերը եւ ձիւնից աւելի ճերմակ դարձնում. այնպէս աղօթք անենք, որ շահենք դրա պտուղները»:

«Ապաշխարութեան պտուղներ» գրքոյկի քարոզներից շատերը գրաբարից աշխարհաբարի

են փոխադրում առաջին անգամ, որոնց աղբիւրն է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 2008 թ. հրատարակուած Յովհան Ոսկեբերանի «Ճառք եւ նշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց» ժողովածուն: Վստահ ենք, որ Սուրբ հոգեւորականի մտքերը բնաւ չեն կորցրել արդիականութիւնը, դրանք այսօր հաւասարապէս սնուցում են մեր 21-րդ արագահոս դարի մարդու միտքն ու հոգին՝ քրիստոնէական պատուիրանապահութեան, ապաշարութեան, սիրոյ, ողորմութեան կոչելով ամենքիս:

Եւ ուրեմն՝ բարի երթ մաղթենք «Ոսկեղենիկ» մատենաշարին, եւ սիրելի ընթերցողին բարի ընթացք՝ Սուրբ Յովհան Ոսկեբերանի մտքի թեւերով աստուածային ոլորտներում ճախրելիս:

Նորայր Պօղոսեան
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՂՔԱՏՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ողորմութիւն ցանենք,
յաւիտենական կեանք կը հնձենք:

Եղբայրնե՛ր, օրհնե՛նք ողորմած Աստծուն, որ Միածին Որդուն ուղարկեց Իր ծոցից, որ գալով փրկեց մեզ, քանզի բարձունքներից ծագեց մեզ համար արեգակը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսը, որ բոլոր քրիստոնեաների յոյսն է եւ յարութիւնը՝ բոլոր հաւատացեալ ննջեցեալների: Եկէ՛ք միաբանութեամբ ասենք՝ «Օրհնեա՛լ լինի Նա, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնութիւն բարձունքներում, գոհանա՛նք Տիրոջից, բոլոր ժողովուրդ-

ներ, քանզի քաղցր է, քանզի յաւերժական է Նրա ողորմութիւնը» (*Սաղմ. 99. 5*):

Աստուած մարմնացաւ եւ մեր մեղքերը սպանեց Իր մարմնով: Ինքը մեզ համար մեռաւ, եւ մեր մեռելութիւնը կենդանութեան փոխեց, քանզի խաւարից լոյսի փոխուեցինք, մահուանից՝ կեանքի, քանզի Աստուած բնակուեց մարդկանց մէջ, ինչպէս որ ասուած է. «Ես պիտի բնակուեմ նրանց մէջ, պիտի գնամ դէպի նրանց եւ պիտի լինեմ նրանց Աստուածը, իսկ նրանք պիտի լինեն իմ ժողովուրդը: Իմ ծառաները պիտի կոչեմ եւ օրհնեմ նրանց երկրի վրայ» *(հմմտ. Ղեւտ. 26. 12),* քանզի քրիստոնեաները օրհնուած են երկրի վրայ:

Տե՛ս ուրեմն, սիրելիս, Աստծոյ երախտիքը եւ Նրա սէրը, որ ունի մարդկանց յանդէպ: Տե՛ս եւ ընկալի՛ր եւ օրհնի՛ր Նրա անունը յաւիտեան: Քանզի երկնքից երկիր խոնարհուեց, երկրաւորներիս երկնային դարձրեց, զգեստաւորուեց մեր մարմնով եւ փրկութիւն բերեց մեզ, հայրական սէր տնկեց մեր սրտերում, որ աղաղակենք Իրեն՝ «Աբբա հա՛յր»: Մահուանը հնազանդուեց եւ մահով զօրութիւնները յաղթեց, որպէսզի մեզ

երկնային դարձնի, մեզ երկնքի արքայութիւնը խոստացաւ:

Այսուհետ, սիրելինե՛ր, պար ենք բռնելու երկնային արարածների հետ, քանզի հրեշտակներին հաւասար եւ Աստծոյ որդիներ դարձրեց մեզ, լոյսի՛ որդիներ եւ որդիներ ցերեկուայ, գիշերուայ չենք մենք, չե՛նք խաւարելու:

Արդ՝ եթէ Նա այդքան սիրեց մեզ, ուրեմն մենք էլ պարտաւոր ենք Նրա պատուիրանները կատարել: Եթէ այդպէս յոյժ սիրեց ու ողորմաց Աստուած մարդուն, ուրեմն մենք էլ պէտք է աղքատներին ողորմութիւն անենք:

Սուրբ Աւետարանը պատուիրում է՝ «Երանի՛ ողորմածներին, քանզի նրանք ողորմութիւն պիտի գտնեն» (*Մատթ. 5. 7*): Ո՞րտեղ կամ ումի՞ց պիտի ողորմութիւն գտնեն - ահաւոր օրը եւ սոսկալի ատեանում Յիսուս Քրիստոսից պիտի գտնեն: Երբ մէկը ձեռք մեկնի աղքատներին ողորմութիւն տալու, կը փրկի իրեն մահուանից, նմանուող կը լինի Աստծուն եւ իր գանձերը երկնքում կ՚ամբարի, ուր ցեցը կամ ուտիճը չեն ապականի եւ գողերը չեն յափշտակի (*տե՛ս Մատթ. 6. 21*):

Ով ողորմութիւն է անում աղքատին ու տնանկին, Տէրը նրան կը փրկի չար օրուանից, օրհնութեամբ նրան կը թողնի ամբողջ վաստակը: Քանզի ասում է Քրիստոս՝ «Ողորմութիւն եմ կամենում, եւ ոչ թէ զոհ» *(Մատթ. 9. 13)*:

Բարիք տուեցիր՝ դրա հետ մէկտեղ կը քաւես նաեւ քո մեղքերը:

Ձեռք մեկնեցիր այս երկրի վրայ աղքատին՝ մօտիկ կը լինես Աստծուն:

Ողորմութիւն արեցիր տնանկին՝ փոխ տուած կը լինես Աստծուն երկնքում:

Կենդանի սերմ սերմանեցիր՝ երկնքում առանց դադարի կը հնչի քո ձայնը որպէս անմահական պտուղ, ողորմութիւնը կ՚իջնի թէ՛ գիշեր, թէ՛ ցերեկ, եւ սիրելի կը լինես Աստծուն:

Մեծ զօրութիւն եւ հզօր ուժ ունի ողորմութիւնը, այն կարողանում է բոլոր չարիքները կործանել, մեղքերի զօրութիւնը ջլատել, քաջալերութիւն շնորհել Աստծոյ առաջ: Եւ թող նրա զաւակն օրհնուած լինի, հիմքերը անշարժ մնան՝ ինչը որ

ողորմութեամբ է հաստատուած: «Ողորմութիւն էք տալիս, եւ ձեր ամէն ինչը մաքուր կը լինի»,- այդպէս է ասում, քանզի կտաւ են աղքատները, որոնց շնորհիւ ջնջւում են մեր հոգու աղտերը:

> Եթէ աղքատներին ողորմութեամբ ընդունես քո տունը եւ տնանկին՝ գթալով, ջնջած կը լինես քո մեղքերը: Ինչ մեղքով որ աղտոտեցինք ինքներս մեզ, նոյնը ողորմութեամբ կը սրբուի:

Քանզի մեղքը պղծում է հոգին ու մարմինը եւ բարկացնում Աստծուն, իսկ **ողորմութիւնը սրբում է հոգին ու մարմինը, հաշտեցնում է Աստծոյ հետ եւ ուրախութիւն բերում**:

Դու անցողիկ բաներով ես ողորմութիւն անում, իսկ Աստուած անապականով կ'ողորմայ քեզ, կը պահպանի ու կը պարուրի քեզ ողորմութեամբ եւ գթութեամբ, քանզի ողորմութեա՛մբ մեզ Աստուած վերադարձրեց ճշմարիտ գիտութեանը: Հեթանոսներն անգամ, ասում է, ողորմութեան համար փառաւորում են Աստծուն:

Ո՞վ կարող է պատմել Տիրոջ զօրութեան մասին, Նրա բարութիւնից առաւել մեծ ի՞նչ կարող է

լինել, քանզի Աստուած չարչարուեց մարդկանց համար, որպէսզի նրանց երկնաւոր դարձնի:

Ո՞վ կարող է պատմել այդ երախտիքի մասին, քանզի Աստուած մարդկանց համար իջաւ երկիր, շրջեց աշխարհում, թշնամիների մէջ սէրը ցոյց տուեց եւ թշնամու բռնութիւնը փլուզեց: Իր Խաչով խաղաղութիւն բերեց. Խաչը Քրիստոսի չարչարանքներն է ցոյց տալիս, իսկ Տէրը չարչարուեց եւ Իրեն կերակուր պատրաստեց մեզ համար: Ինչպէս եւ ասում է՝ «Ես եմ կենաց հացը՝ կենդանի իջած երկնքից եւ ամենքին կենդանացնող», քանզի «Ով ուտում է իմ մարմինը եւ ըմպում իմ արիւնը, կը բնակուի իմ մէջ, եւ ես՝ նրա մէջ» *(Յովհ. 5. 58)*:

Իսրայէլացիներին վա՛յ տալով՝ մարգարէն ասում է. «Մարդիկ հրեշտակների հացը կերան» *(Սաղմ. 77. 25)*: Ու թէեւ մեծագին էր մանանայի պատմութիւնը, բայց ո՛չ մեր ստացած պարգեւի չափ, երբ մանանայի փոխարէն Իր մարմինը որպէս կերակուր եւ վէմից բխող ջրի փոխարէն՝ Իր սուրբ արիւնը բաշխեց, որպէսզի կեանք տայ, ովքեր հաւատով ճաշակում են այն:

Լսի՛ր, թէ ինչ է ասում Փրկիչը հրեաներին. «Ձեր հայրերը անապատում մանանան կերան, սակայն մեռան» *(Յովհ. 6. 48)*, քանզի յաւիտենական կեանքի համար չէ, որ իջաւ մանանան, այլ որպէսզի ցոյց տայ Աստծոյ զօրութիւնը եւ յանդիմանութեան արժանանայ նրանց հաւատալիքը: Տէրը Եգիպտացիների երկրից հանեց հրեաներին, որ, սակայն, փորձում էին Տիրոջն ու ասում. «Միթէ կարո՞ղ է Աստուած անապատում սեղան պատրաստել» *(Սաղմ. 77. 19)*: Ու չնայած որ մանանայ իջեցրեց ջրեր բխեցին վէմից, սակայն միեւնոյն է՝ չհաւատացին:

Իսկ Քրիստոս յաւիտենական կեանքի համար եկաւ. «Ես եկայ, ասում է, որպէսզի յաւիտենական կեանք ունենաք» *(Յովհ. 10. 10)*: «Ես եմ կեանքի հացը, որ երկնքից է իջած, եւ ով որ ուտի այս հացից՝ մահը չի տեսնի յաւիտեան» *(հմմտ. Յովհ. 9. 50)*: Կեանքի՛ համար աշխարհ եկաւ Տէրը եւ Իր մարմինը որպէս կերակուր եւ Իր սուրբ արիւնը որպէս ըմպելիք տուեց, որով սատանային կապեց եւ դժոխքը աւիրեց:

Տեսնու՞մ ես, ո՛վ սիրելի, Աստուծոյ անչափ սէրը մարդկանց յանդէպ, հրեշտակներն անգամ

երկնքից զարմանում են մարդկանց յանդէպ ունեցած Աստուծոյ սիրոյ վրայ: Եւ եթէ Նա այսպէս սիրեց մեզ, ապա պարտաւոր ենք Նրա սէրը տնկել մեր սրտերում եւ լինել ողորմած, որպէսզի մենք նոյնպէս ողորմութիւն գտնենք ահաւոր եւ սոսկալի օրը:

Հեռու՛ վանենք ագահութիւնն ու ամենայն չարիքի արմատներն ու արծաթասիրութիւնը, դրանով սովորաբար մեծամեծ չարիքներ են գործւում, ինչպէս եղաւ մատնիչ Յուդայի եւ նրա նմանների դէպքում: Քանզի միայն կռապաշտութիւնն արդեն ագահութիւն է, որովհետեւ ագահը մշտապէս բարկացնում է Աստծուն, հեռացած է լինում հաւատքից:

Ուստի աղաչում եմ ձեզ, հեռու՛ մնացէք ագահութիւնից, յոյսներդ ողորմած Աստծոյ վրայ դրէք, քանզի Քրիստոսին հաւատացողների համար այս աշխարհը լի է բարիքներով, իսկ անհաւատները մի գրոշ իսկ չեն գտնի: Հաւատացեալները աշխարհի տարուբերումներից չեն սասանուի, որոնք Քրիստոսին ունեն որպէս իրենց յոյս եւ Նրա հետ կը վայելեն անանց բարիքները: Այն, ինչ աչքը չի տեսել, ականջը չի լսել եւ մարդու

սիրտը չի ընկել, այն է պատրաստել Քրիստոս իր սիրելիների՝ հաւատացեալների համար: Իսկ ա-նհաւատներն ու անողորմ մարդիկ կը ստանան յա-ւիտենական տանջանքներ, անշէջ հրոյ տարտարո-սը, անքուն որդը, աչքերի լացն ու ատամների կրճտոցը եւ նման այլ բաներ:

Դրա համար աղաչում եմ ամենքիդ, քնով չընկնէ՛ք երբէք: Քանզի եթէ կամենում էք տեսնել Աստծոյ Քրիստոս Որդուն, իմացէք՝ ձեր դռան մօտ է Նա մշտապէս եւ կամենում է բժշկել եւ Իր ողորմութիւնը շնորհել ձեզ, ուստի անտեղի պատրուակներ մի՛ փնտրէք, այլ մեծամեծ բարիք-ներ շնորհէք:

Եւ ուրեմն՝ ինչպէ՞ս կարող ես անանց բարու-թիւնները հաւասար դնել անցողիկների հետ: Քանզի դու անցողիկ բաներով ես ողորմութիւն անում, իսկ Աստուած ոչ թէ դրանցով, այլ անանց գանձերով է մեծացնում քեզ:

Դու աղքատին պղնձի երկու գրոշ ես բաշ-խում, իսկ Քրիստոս արքայութիւն ու անմահու-թիւն է տալիս:

Դու ծարաւ մարդուն մի բաժակ սառը ջուր ես տալիս, իսկ Քրիստոս երկնային վարձն է բազմացնում եւ անմահական ջրով քեզ յագեցնում:

Դու հնացած մի հագուստ ես տալիս աղքատին, իսկ Քրիստոս քեզ համար լուսեղէն պատմուճան է կազմում, Իր ձեռքով պսակում, քանզի յոյժ սիրելի է Աստուծոյ համար ողորմած մարդը:

Նաեւ տե՛ս, թէ ինչպէս է Իր իսկ ձեռքով պատուում քեզ ողորմութեան համար եւ չի խորշում քո աղտեղութիւնից, քանզի եթէ ողորմութիւն ես տալիս աղքատին՝ կոյր լինի նա թէ կաղ, իմացի՛ր, որ Քրիստոսին ես տալիս եւ ոչ թէ մարդուն: Աստծուն փոխ տուր եւ Աստծուց փոխարէնը կը ստանաս: **Մի՛ մեծամտացիր, երբ տալիս ես, քանզի փոքրի դիմաց առաւել մեծերն ես ընդունելու**:

Բարի է ողորմութիւն անելը, քանզի այն հալեցնում է մեղքերի սառոյցը, սրբում է հոգու աղտը եւ կանգնեցնում է Քրիստոսի աջ կողմում եւ աստուածային օրհնութեանը ժառանգ դարձնում:

Պէտք է իմանալ, որ առանց ողորմութեան դժուարին է մտնել արքայութիւնը, թէկուզ մէկը

կուսական լինի կամ աղօթական մարդ, միեւնոյն է՝ առանց սիրոյ եւ ողորմութեան ամէն ինչ խոտան է: Օրինակ՝ հինգ կոյսերը ստացել էին ամենայն առաքինութիւններ, եւ գտան ողորմութեան իւղը, մինչդեռ անբարոյ մարդկանց ու չարագործների դէմ փակւում է ողորմութեան դուռը: Քանզի ասում է՝ «Յետոյ եկան միւս կոյսերն էլ, բախում էին դուռն ու ասում՝ «Տէ՛ր, տէ՛ր, բա՛ց արա», իսկ Նա պատասխան տուեց ու ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում» *(հմմտ. Մատթ. 25. 11),* ու նաեւ՝ «ձեր կուսութիւնն անպիտան է ինձ համար»:

Նկատու՞մ ես տարակուսելի ահագին աղէտը: Ուրեմն մտածի՛ր, ո՛վ մարդ, եւ ողորմութիւն արա եւ զգուշացի՛ր նոյն այդ ձայնից:

Լոյսի սկզբնապատճառն է ողորմութիւնը, եւ **ովքեր ողորմութիւն են անում՝ արեգակի նման լուսաւորում են**: Ինչպէս արեգակի սաստիկ ջերմութիւնից լոյս է առաջանում եւ հալեցնում սառոյցը, նոյնպէս եւ ողորմութիւնից մեղքերի սառոյցն է հալչում:

Ողորմութեամբ նաեւ երանաւէտ ձայնն է լսելի դառնում, երբ ասում է՝ «Եկէ՛ք, իմ Հօր օրհնեալ-

նե՛ր, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը. որովհետեւ քաղցած էի, եւ ինձ ուտելիք տուիք, ծարաւ էի, եւ ինձ խմելու ջուր տուիք, օտար էի, եւ ինձ ձեր մէջ առաք, մերկ էի, եւ ինձ յագցրիք, հիւանդ էի, եւ ինձ տեսնելու եկաք, բանտում էի, եւ ինձ այցի եկաք» *(Մատթ. 25. 36):*

Տեսնու՞մ ես Աստծոյ մեծ սէրն ու գթութիւնը. այն, ինչ աղքատի համար է արւում, Աստուած իրենն է համարում, եւ չասաց թէ՝ «Աղքատներին տուեցիք կամ կերակրեցիք», այլ՝ «Ինձ տուեցիք... Ինձ յագցրիք...»:

Ահա եթէ ողորմութիւնն այսպիսի զօրութիւն ունի, ուրեմն անդադար ձեր ձեռքը մեկնէ՛ք աղքատներին: Բայց դա մի՛ արէք կեղծաւորների նման, որ արածն ի ցոյց են դնում եւ իրենց վարձը կորստեան մատնում մոլեգին փառասիրութեան պատճառով, քանզի նման վարձը ընդունելի չէ Աստծուն. տուածն ապականւում է, տուողին հպարտացնում եւ Աստծուն բարկացնում: Այդ պատճառով Աստուած անտեսում է նրանց, քանզի արհամարհելի է Տիրոջ համար կեղծաւոր մարդը, ցրում է երեսպաշտների ոսկորները, կեղ-

ծաւորների աղօթքներից դեւերն են որդերի նմանութեամբ խաղում ու ծայթում, դեւերը պար են բռնում, դիւապետերը՝ ծափ զարկում: Մենք պէտք է հեռու փախչենք այսպիսի սնափառութիւնից:

> Չմեծամտանանք ողորմութիւն տալիս, քանզի ինչպէս ցողից բոյսերն են զուարճանում, այնպէս էլ ողորմութիւնից ոգիներն են պայծառանում:

Դրա համար է Փրկիչն ասում՝ «Երանի՛ ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմութիւն պիտի գտնեն» *(Մատթ. 5. 7)*: Եւ Դաւիթ մարգարէն ասում է՝ «Երանի նրան, ով մտածում է աղքատի ու տնանկի մասին. փորձանքի օրը Տէրը կը փրկի նրան» *(Սաղմ. 40. 2)*:

Ոչ թէ աղքատին, այլ Քրիստոսին ես տալիս, որ ամենայն բարիքներ շնորհեց քեզ թէ՛ ներկայի, թէ՛ հանդերձեալի համար: Դեռատես կինը մերձեցաւ Քրիստոսին, եւ ցամաքեց արեան աղբիւրը,

ողորմութիւն տալով, ահա, ցամաքում եւ չորանում է մեղքերի պտուղը:

Մի՛ յապաղիր ողորմութիւն անել, երկի՛ւղ ունեցիր գեհենից, քանզի եթէ կոյսերը հարսանիքից դուրս մնացին իւղի պակասութեան պատճառով, դու՞ ինչ պիտի անես, երբ բոլոր տեսակի աղտեղութիւնների մէջ ես որկրամոլութեամբ, պոռնկական պակշոտ ոգով, սուրբ ամուսնութիւնն ապականելով, երբ Քրիստոսի անդամներն ունենալով՝ անբարոյ անդամներ ես քեզ համար դարձնում: Ոմանք էլ Սոդոմի ու Գոմորի ախտով են վարակւում, իսկ ոմանք Կայենի նախանձով՝ որով ոխակալութեամբ սպանուեց Աբէլը: Եւ ոմանք իրենց մեղքերի գերանը չտեսնելով՝ այլոց աչքի շիւղն են յանդգնում հանել, կամ՝ բամբասանքով ապականում են իրենք իրենց:

Տե՛ս սատանայի չարութիւնը. ինչպէ՞ս է նա կարողանում մեզ յափշտակել, որ մենք չենք զգում: Դրանից է, որ չարիքն եկաւ ու մեզ պատեց եւ մեր ազգը գերութեան մատնեց: «Չունենք մենք օգնական եւ ապաւէն մեզ համար, որեւէ մէկը չկայ, որ օգնութեան հասնի» *(հմմտ. Եսայի, 63. 5):* «Մեր վաստակածը հենց մեր առաջ օտար-

ները կերան, մենք ոտի կոխան եղանք բոլոր ազգերի համար, եւ այս ամէնը մեր մեղքերի համար եղաւ» (*հմմտ. Իմաստ. 3. 11*):

Արդ՝ աղաչում եմ ձեզ, ո՛վ սիրելիներ, նման օրինակները թող առաջնորդ չլինեն, որպէսզի Աստուած մեզ վրայ չբարկանայ, այլ սիրէ՛ք միմեանց: Լսի՛ր Փրկչին, որ ասում է. «Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց» *(Յովհ.13.34)*:

> Սէրը պակասի՝ կը խնդայ սատանան, քանզի ուր սէրն է՝ այնտեղ չկայ նախանձ, չկայ ատելութիւն, չկայ չարութիւն, հպարտութիւն, հակառակութիւն եւ նման այլ բաներ:

Սէրը պակասելիս բուսնում է չար որոմը, այսինքն՝ բամբասանքը, ատելութիւնը, երկպառակութիւնը, ոխակալութիւնը, ոխն ու չար նախանձը, չարակնութիւնը, նենգութիւնը, սպանութիւնը, չարախօսութիւնը, սուտ երդումն ու սուտ խօսքը, չար պատահարի վրայ ուրախանալը, բարութեան փոխարէն չարութիւն անելը: Այս

ամէնը սիրոյ պակասից է լինում, քանի որ ատելութիւնը ոխակալութիւն է ծնում, ոխակալութիւնը՝ սպանութիւն:

Արդ աղաչում եմ, ամո՛ր պահէք ձեր սրտերը եղբօր սիրոյ հանդէպ եւ յօժար՝ մերձաւորին ողորմութիւն անելիս: Որովհետեւ ինչ որ ցանում է մարդ, նոյնն էլ հնձում է՝ բարի լինի այն, թէ չար: **Ողորմութիւն ցանենք՝ յաւիտենական կեանք կը հնձենք**:

Լսի՛ր Տէր Յիսուսին, որ ասում է. «Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ո՛չ քո բարեկամներին, ո՛չ քո եղբայրներին, ո՛չ քո ազգականներին եւ ո՛չ էլ քո հարուստ հարեւաններին, որպէսզի նրանք էլ փոխարէնը քեզ չհրաւիրեն, եւ քեզ հատուցում լինի: Այլ երբ ընդունելութիւն անես, կանչի՛ր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կոյրերին եւ երանելի կը լինես, որովհետեւ փոխարէնը քեզ հատուցելու ոչինչ չունեն» *(Ղուկ. 12.14)*: Դրա փոխարէն արդարների վարձը եւ արքայութիւնը Աստծուց կը ստանաս:

Նաեւ բնաւ մի՛ փորձիր Աստծուն եւ մի՛ քննիր անքննելին, անյոյս մի՛ եղիր, այլ հաւատայ, մի՛

ցանկացիր անցաւորն ու մի՛ ակնկալիր մարմնաւոր բաներ, քանզի սուտ է այս կեանքը եւ ունայն:

Եւ դու՛, սիրելի՛, ապաւինի՛ր Աստծոյ ողորմութեանն ու նրա սիրոյ գթութեանը, դրա շնորհիւ է, որ երկիրն ու երկինքը մէկ դարձան, որով սատանան կապուեց եւ կապուածները արձակուեցին, փակուած դրախտը բացուեց մարդկանց ազգերի համար:

Արդ՝ երբ ճշմարիտ լոյս Քրիստոսին ընդունեցինք, անյուսութեամբ կործանման չենք գնայ, քանզի **ուր Քրիստոս է բնակուած, այնտեղ լոյս է**: Արդարների եւ մեղաւորների յարութիւն է լինելու, ուրեմն շտապի՛ր փարատելու մեղքերդ, որպէսզի Քրիստոսի հետ լոյսի մէջ բնակուես, քանզի կարող կը լինես տեսնելու Քրիստոսին աղքատների ու կարօտեալների միջոցով:

> Քաղցեալներին կերակրի՛ր, ծարաւածին արբեցրու՛, մերկին յագցրու՛, օտարին ժողովի՛ր, հիւանդին տեսութեան գնա՛, տրտմեալներին մխիթարի՛ր: Եւ այդ ժամանակ Քրիստոսի

հետ լոյսի մէջ կը լինես, կը լսես օրի-
նութեան ձայնը:

Մի՛ նմանուիր հերձուածողներին եւ մի՛ հե-
տեւիր նրանց, քանզի հերձուածողները յարու-
թեան յոյսը չունեն եւ ասում են, թէ մեռեալներին
յարութիւն չկայ, իսկ ոմանք էլ թէ՝ մարդու ոսկոր-
ները փտում ու ապականւում են, ինչպէ՞ս յա-
րութիւն կարող են առնել: Նրանցից ոմանք էլ
ասում են, թէ դատաստան գոյութիւն չունի, եւ
փակում են իրենց ականջները Աստծոյ Որդու
ձայնը չլսելու համար, Որ ասում է՝ «Կը գայ ժա-
մանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում
են, կը լսեն նրա ձայնը եւ դուրս կը գան» (*Յով. 5.
28*):

Իսկ դու հեռու մնայ այդպիսի մարդկանցից,
որովհետեւ դրանք սատանայի բնակարան են եւ
յաւիտենական հրոյ դժոխքի են ենթակայ: Լսի՛ր
Փրկչին, որ ասում է՝ «Ես որպէս լոյս եկայ աշ-
խարհ, որպէսզի ամէն ոք, որ ինձ հաւատում է,
խաւարում չմնայ» *(Յով. 12. 46)*: Մենք ունենք
լոյսի ճշմարիտ օրինակը, քանզի ինչպէս Ինքն է

լոյս, նոյնպէս եւ Իրեն հաւատացողներին է լոյս դարձնում:

Ուրեմն՝ եթէ ճշմարիտ լոյսը մեր մէջ է, փախչե՛նք խաւարային գործերից եւ բոլոր կողմերից ամրացնենք ինքներս մեզ սիրոյ հաւատքով, համբերութեան յոյսով, վստահ լինենք ողորմած, մարդասէր եւ բարեգութ Աստծուն՝ արդար եւ անյիշաչար դատաւորին, որ մեղաւորներին, մաքսաւորներին, աւազակներին, սպանողներին, անբարոյ մարդկանց, հայհոյողներին երկինք բարձրանալ է շնորհում: Որ մաքսաւորներին աւետարանիչ դարձրեց, պոռնկին սրբեց, մեղաւորներին արդարացրեց, աւազակին դրախտ տարաւ, եւ նրան, ով Իր կողն էր խոցել, մարտիրոսների պատուին բարձրացրեց: Քանզի իմացի՛ր, որ եթէ բիւր չարիքներով լցուած լինես, բայց յետոյ դարձեալ ապաշխարես եւ զղջաս՝ առաւել կը բարձրացուես եւ Աստծոյ սիրոյն կ՚արժանանաս:

Արդ՝ զօրացի՛ր Քրիստոսի ողորմութեամբ, մշտապէս Նրան ապաւինի՛ր, քանզի բազում է Նրա ողորմութիւնն ու մարդասիրութիւնը, որի մասին ո՛վ կարող է պատմել: Եւ եթէ Նա այդպէս

սիրեց մեզ, պարտաւոր ենք մենք էլ Նրա՛ն սիրել եւ Նրա պատուիրանները կատարել:

Իսկ ինչպէ՞ս սիրենք Նրան. այնպէս, որ արժանի անենք մեզ՝ ճաշակելու Աստծոյ Որդու սուրբ մարմինն ու արիւնը, սիրենք ընկերոջը եւ ոխակալութիւնը հեռու վանենք, քանզի ամենայն ինչի եւ պատուիրանների գլխաւորը հէնց մեծ սէրն է: Մինչդեռ **ոխակալութիւնը ամէն ինչ ապականութեան է վերածում, աղօթող մարդուն կորստեան մատնում**:

> Եւ դու՛, սիրելի՛, զերծ պահիր քո սիրտը ոխակալութիւնից եւ սիրի՛ր քո ընկերոջը ինչպէս քո անձը եւ համարձակութեամբ հաղորդակի՛ց եղիր Քրիստոսի ճշմարիտ արեանն ու մարմնին:

Հեռու՛ նետիր քեզանից բոլոր տեսակի մեղքերը եւ ապաւինի՛ր Աստծոյ մեծութեանը, քանզի Նա ողորմած է, գթած, համբերատար ու բազումողորմ եւ ներում է չար մարդկանց մեղքերը:

Դու միայն դարձի՛ր դէպի Նա, եւ Նա կը դառնայ դէպի քեզ:

Դու աղաչի՛ր Աստծուն, եւ Նա թողութիւն կը շնորհի քեզ: Աղտեղի խորհուրդներով մի՛ լցրու քո սիրտը, քանզի այդ դէպքում չես կարող տեսնել Աստծուն եւ ոչ էլ կարող ես ողորմութիւն խնդրել նրանից, քանզի Աստուած սուրբ է եւ բնակւում է սուրբերի մէջ:

Արդ՝ փախի՛ր աղտեղի խորհուրդներից եւ ամէն տեսակի պիղծ մեղքերից, մաքուր սրտով եւ բարի խորհրդով եւ անխռով աղօթքներով Բարձրեալից ողորմութիւն, Յիսուս Քրիստոսից թողութիւն խնդրիր, քանզի մեծ է Աստծոյ սէրը մարդկանց յանդէպ եւ անչափելի է Նրա մարդասիրութիւնը, քանզի Նրան վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Երբ դարձի գաս ու ապաշխարես՝
Աստուած կ՚ողորմայ եւ կը ների
քո մեղքերը:

Փառաւորե՛նք ողորմած, գթառատ ու մարդասէր ամենակալ Աստծուն, որպէսզի ապաշխարանքի համար համբերատար լինի մեղաւորներիս յանդէպ:

Տե՛ս, իմ սիրելի, բազում ողորմութիւնը բարերար Աստծոյ, որ ոչ միայն թողութիւն է տալիս մեր մեղքերին, երբ դառնում ենք դէպի Նա, այլեւ արդարացնում եւ պարուրում է իր ողորմու-

թեամբ, արժանի է անում ուրախութեան եւ ցնծութեան, ինչպէս որ Ինքն է կամենում:

Նայի՛ր, տես, թէ ինչպէս Դաւիթ մարգարէն մեղք գործեց, բայց արտասուք թափելով թողութեան արժանացաւ, եւ ո՛չ միայն թողութեան, այլեւ Աստծուն սիրելի ու բարեացակամ դարձաւ, այնքան՝ որ ասաց Աստուած. «Այս քաղաքը պիտի հովանաւորեմ, որպէսզի այն ազատեմ ինձ ու իմ ծառայ Դաւթի համար» (*Դ. Թագ. 19. 34*):

Աստուած մարդուն չի դատում նրա գործած առաջին մեղքերին համարժէք չափով, երբ որ տեսնում է ապաշխարութիւնն ու սուգը: Դրա համար է Յիսուս երանի տալիս սգաւորներին՝ մեղքերի՛ համար սգացողներին, որոնց մխիթարութիւնը միայն մէկ օր կամ մէկ պահի չպիտի լինի, այլ՝ անվերջ ու յաւերժական:

Պէտք է իմանալ, որ **չկայ որեւէ մեղք, ինչքան էլ այն սաստիկ լինի կամ մահու չափ վտանգաւոր, որ դիմանայ ապաշխարութեանն ու ջերմ արտասուքին**: Ապաշխարութիւնը յաղթում է մեղքերին, քանզի եթէ սպանողն անգամ մօտենայ ապաշխարութեամբ՝ կարող է արդարացուել եւ հաճոյ դառնալ Աստծուն:

Այդպէս Դաւիթը շնացաւ, սպանութիւն գործեց, սակայն գնահատելի արդարացում ստացաւ, քանզի ապաշխարեց եւ շնութեան ու սպանութեան գործերից յետոյ արդար վաստակով սրբուեց կործանող մեղքերից եւ արժանացաւ Սուրբ Հոգու ողորմութեանը: Եւ բերկրանք ու ցնծութիւն պատճառեց Աստծուն, ուրախացրեց հրեշտակներին իր ամենայն ապաշխարութեամբ:

Ճիշտ այդ օրինակով դու նո՛յնպէս կարող ես արդարացուել, եւ թէկուզ խիստ մեղքերի մէջ լինես, բայց Աստծոյ գթութեամբ, որ կամենում է բոլոր մարդկանց փրկութիւն բերել, դրանցից առաւել զօրաւոր կարող է լինել ապաշխարութիւնը: Ցանկալի չէ Աստծուն մեղաւորների կործանումը, դրա համար էլ ապաշխարութիւնն ու մարդկանց դարձը առաւե՛լ զօրաւոր դարձրեց բոլոր մեղքերի համեմատ, որպէսզի ապաշխարութեամբ հնարաւոր լինի բոլոր տեսակի չարիքներին յաղթել, մեղքերը հալածել:

Աստուած ապաշխարութիւնը բարձր կարգեց նաեւ սատանայի բոլոր հարուածներից, որպէսզի որ ով մերձենայ Իրեն՝ կարողանայ բժշկուել: Քանզի Ինքը Տէրն ասում է՝ «Ես մեղանչածի

մահը չեմ տենչում, այլ նա թող յետ կանգնի իր չար ճանապարհներից ու փրկի իր հոգին» (*Եզէկ. 18. 32*): Դրա մասին նաեւ ասում է՝ «Քանզի ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղաւորներին» (*Մատթ. 9. 13*):

Կամենում եմ շարունակ խօսել ու խօսել Աստծոյ ողորմութեան եւ սիրոյ մասին, որ առատապէս հեղում է նաեւ մեղաւորների վրայ՝ որպէսզի ապաշխարեն, քանզի **Աստուած իր բազում գթութեամբ ու սիրով, հրեշտակներով հանդերձ, ուրախ է լինում ապաշխարողի համար**, ուրախ է լինում, երբ որ գտնւում է մոլորուած ոչխարը, երբ վերադառնում է անառակ որդին: Ինչպէս որ մարգարէն է ասում՝ «Գետերը թող փառաւորեն Աստծուն, ծափ տան միասին իրենց ձեռքերով, ու լեռները ցնծան Տիրոջ առջեւ, քանզի ահա գալիս է կենդանի Աստծոյ Որդին եւ հասել է ամենքի Տէրը» (*Սաղմ. 97. 8*):

Նմանապէս մոլորեալների դարձի գալու եւ կորուսեալ մեղաւորների փրկութեան համար կը ցնծան երկինքն ու երկիրը, Աստուած ու բոլոր հրեշտակները կ’ուրախանան:

Հրեշտակների օրհնաբեր լուրը, երբ ասում էին «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ», ցոյց է տալիս, որ Հայրը բարձունքից ուղարկեց Իր Որդուն բոլոր մեղաւորների եւ լոյսից խաւարածների փրկութեան համար:

Դրա համար է, որ օրհնելով ասում էին՝ «Փա՛ռք Աստծուն բարձունքներում եւ երկրի վրայ խաղաղութի՛ւն եւ հաճութի՛ւն մարդկանց մէջ» (*Ղուկ. 2. 14*), քանզի մարդկային ազգը մօտ էր կորստեան եւ Աստծոյ ողորմութեամբ է, որ փրկութիւն գտաւ: Օրհնելու պատճառը, ուրեմն, Աստծոյ գալուստն է, որի համար հրեշտակները փառք էին տալիս Աստծուն բարձունքներում, երկրին խաղաղութիւն մաղթում, քանզի հաշտուեց Աստուած մեղաւորների հետ, որոնք փրկութիւն ստացան ապաշխարութեամբ:

Դրա համար է, որ երկնային զօրքերն աւետիս էին տալիս՝ «Ձեզ համար Փրկիչ ծնուեց» (*Ղուկ. 2. 11*), որ սատանայի ձեռքից պիտի փրկի մեղաւորներիդ եւ խաղաղութիւն հաստատի մեղաւորների ու Աստծոյ միջեւ:

Դրա համար է, որ խաղաղութեան քարոզ է ասւում թէ՛ երկնքում եւ թէ՛ երկրի վրայ, քանզի

խաչի չարչարանքներով խաղաղութիւն հաստատեց եւ Իր մահով փրկեց մեզ եւ լուսաւորեց երկինքն ու երկիրը թէ՛ արդարների ու թէ՛ մեղաւորների համար:

Որդու գալուստը խաղաղութիւն է անուանում, քանզի իրօք մեծ եւ ճշմարիտ խաղաղութիւն է, երբ Տէրը այցի եկաւ կոյսին, որովհետեւ Նրա ծնուելով Աստուած հաշտուեց նախաստեղծ մարդու եւ նրա սերունդների հետ:

Տէրը երկիր եկաւ փրկելու մեզ՝ մեղաւորներիս, այսինքն մաքսաւորներին, շնացողներին, աւազակներին, հայհոյողներին, մոլորուածներին, որպէսզի ոտքի կանգնեցնի եւ Աստծոյ որդիներ դարձնի: Նրանց համար Տէրը չարչարուեց, թաղուեց, յարութիւն առաւ մեռելներից:

Տիրոջ գալուստը, որով ամենքս փրկութիւն ստացանք, ոչ միայն արդարների համար էր, այլ նաեւ մեղաւորների ու մոլորեալների: Ինչպէս Տէրն է ասում՝ «Առողջներին բժիշկներ պէտք չեն, այլ հիւանդներին» (*Ղուկ. 5. 31*), ու նաեւ՝ «Ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղաւորներին» *(Մատթ. 9. 13)*, այսինքն՝ եկել է նրանց մոլորութիւնից ապաշխարութեան դարձնելու, թշնամու

ձեռքից փրկելու համար: Ինչպէս Պօղոսն է ասում՝ «Մինչ մեռած էինք մեր մեղքերի մէջ, մեզ կենդանացրեց Քրիստոս» (*Եփես. Բ. 5*): Եւ հենց ինքը՝ մեր Տէրն ասում է. «Աստուած իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ դատապարտի աշխարհը, այլ որպէսզի աշխարհը նրանով փրկուի» (*Յովհ. 3. 17*):

Մեր Տէրը ոչ թէ արդարների համար մեռաւ, այլ մեղաւորների: Նրա համար փշէ պսակով պատուեց, որպէսզի դու փրկուես, ապրես, փառք տաս Տիրոջը չարչարանքների համար, որ մեր կեանքի ու փրկութեան համար արեց: Եւ Տէրն Ինքը ասաց՝ «Իմ մահը մեղաւորների համար եղաւ» *(Գաղատ. 1. 4):*

Ուրեմն՝ ինչպէ՞ս կարող ենք յուսահատ մնալ Աստծոյ Որդու գալուստից յետոյ, երբ Նա եկաւ ոչ թէ աշխարհը դատապարտելու, այլ փրկելու համար: Աստծոյ Որդին չարչարուեց մեղաւորների համար, ուրեմն դու ինչու՞ չպէտք է ապաշխարես ու փրկուես, ո՛վ մեղաւոր մարդ: Նինուէացիները վախեցան յանցանքների համար եւ ջերմեռանդ զղջմամբ ապաշխարեցին ու ապրեցին, իսկ դու ինչու՞ չես երկնչում Աստծուց, ջերմե-

ռանդօրէն չես մտնում ապաշխարութեան սուգի մէջ: Կարծում ես մշտապէս ներմա՞ն կ՚արժանանս, ո՛վ մեղաւոր: Գուցէ Աստծոյ քաղցր սէրը կարեւոր չէ քեզ համար եւ մտքովդ չես էլ անցկացնում, որ երբ դառնաս ու ապաշխարես՝ Աստուած ողորմութիւն կ՚անի եւ կը ների քո մեղքերը:

Իսկ եթէ այստեղ չապաշխարես, ապա այնտեղ՝ գեհենում արտասուելով հոգուդ ու մարմնիդ կորուստը կ՚ընդունես, ուր ո՛չ լացը օգուտ կը տայ, ո՛չ էլ արտասուքը փրկութիւն կը բերի: Իսկ հիմա, ահա, լսի՛ր Քրիստոսին, որ ասում է, թէ՝ «Իմ բոլոր չարչարանքները մեղաւորների համար են»: Ուրեմն, Քրիստոսի բոլոր չարչարանքները մեզ համար եղան, որպէսզի մեղաւորներիս ապաշխարութեան կոչի, մինչդեռ դու ծաղր ես համարում եւ անկարեւոր գործերով բարկացնում ես Աստծուն:

Ասա՛ տեսնեմ, երբ մէկի որդին մահանայ, եւ դու գնաս, արդեօք կը մտնես ու կը ծիծաղե՞ս նրա վրայ, որեւէ մէկի դուրը կը գայ՞ դա. անպիտան ու թշնամի կը դառնաս մահացածի ծնողներին: Նոյն կերպ՝ եթէ գիտես, որ քո հոգին մեղքերի

ախտով վարակուած ու մեռած է, բայց ծիծաղում ես դրա վրայ, ինքդ քեզ թշնամի չե՞ս դառնում արդեօք, քանզի տեսնում ես հոգիդ մեռած, բայց ծիծաղում ես: Սա յատկապէս նրանց է վերաբերում, ովքեր սատանայական խորհուրդից դրդուած են գործում: Թող խցուե՛ն նրանց բերանները, ովքեր ասում են, թէ պոռնկութիւնը մեղք չէ. դրանով շատերին կորստեան են տանում ու մահուան որս դարձնում: Նման մարդիկ սպանողներ են, մարդկանց կորստեան առաջնորդողներ:

Իսկ մենք եկէ՛ք խօսենք նրանց մասին, ովքեր հաւատքն ունեն, հաճութեամբ մխիթարենք Տիրոջ երկիւղն ունեցողներին: Բոլոր իմաստութիւնների ու գիտութեան սկիզբն ու պատճառը Աստծոյ երկիւղն է *(Առակ. 9. 10)*: Քանզի **Քրիստոս մեղաւորների համար եկաւ, որպէսզի ապաշխարութեամբ ներս մտնեն Իր ճշմարիտ դռնով եւ փրկուեն Աստծոյ մարդասիրութեան շնորհիւ**: Այդպէս անմահութիւն ստացան Աստծոյ Որդուն փառաւորելու համար, քանզի հնացել էին մեղքերի կռապաշտութեամբ, մոռացել էին ճշմարիտ Աստծուն, մեռելոտի չաստուածների ճենճերային հո-

տից դիակների էին վերածուել: Այդպէս նորոգ-ուեց տիեզերքը:

Բայց դու՛, սիրելի՛ս, փութա՛ արտասուքով եւ խոստովանութեամբ յաւիտենական փրկութեանը հասնելու, որին կարողացել են բազում մեղաւոր-ներ հասնել: Շատ ցանկալի է Տիրոջը մեր փրկութիւնը, որի համար կամովին չարչարանքի մատնուեց: Ուրեմն դու նո՛յնպէս կամովին խոստովանիր քո բոլոր յանցանքները, լացով ու հառաչանքով քաւիր մեղքերդ, ինչպէս նինուէա-ցիներն ու այն պոռնիկը, ինչպէս եկեղեցու վէմ Պետրոսն ու Մատթէոս մաքսաւորը:

Դու նոյնպէս, եթէ կամենաս, կարող ես նրանց նմանուել, կարող ես ամէն չարիք հեռու վանել քեզանից, եւ Աստուած այլեւս չի յիշի քո մեղքերը, այլ Իր փառքին կերպարանակից կը դարձնի, հրեշտակներին հաւասար եւ Աստծոյ որդի կ’անի, կը դարձնի ցերեկուայ եւ լոյսի որդիներ, ո՛չ թէ սովորական լոյսի, այլ այն լոյսի, որ ինչպէս Որոտման որդի Յովհաննէսն է ասում՝ «Այն ճշմարիտ լոյսն է, որ լուսաւորում է ամէն մարդու, որ գալու է աշխարհ» *(Յովհ. 1. 9)*, եւ՝ «Լուսաւորում է նաեւ մեղքերով բոլոր խաւարածներին»: Եւ

այդպէս Աստուած լոյսի ճշմարիտ որդիներ կը դարձնի խաւարած մեղաւորներին, երբ որ ապաշխարեն նրանք:

Լուսաւորի՛ր ինքդ քեզ ապաշխարութեան ճշմարիտ լոյսով, ո՛վ սիրելի: Յոյսդ դի՛ր մարդասէր Աստծոյ վրայ, որ քեզ համար աշխարհ եկաւ եւ քեզ ապաշխարելու կանչեց:

> Ապաշխարիր՝ եւ կ'ապրես, երկնային բարութեանն արժանի կը լինես, քանզի Աստուած շատ սիրեց մեղաւորի դարձը, որի համար թողեց երկինքն ու եկաւ քեզ մօտ, որպէսզի քեզ երկինք հանի ապաշխարութեամբ:

Իսկ Քրիստոս Ինքը ճշմարիտ լոյս է, յարութիւն է եւ կեանք, բնակւում է լոյսի մէջ եւ Հօր ծոցում, Որին մսուրի մէջ դրուած ենք տեսնում մեղաւորների փրկութեան համար:

Որ Իր փայլով պայծառացրեց արեգակին:

Որ զգեստաւորում է սուրբերին Իր փառքով:

Որ մեզ համար մեռաւ եւ փրկեց մեզ մահ-ուանից:

Խանձարուրով պատուեց մեր փրկութեան համար:

Մեզ համա՛ր փախստական եղաւ, որպէսզի մեզ Իր մօտ բերի:

Վիրաւորուեց, որպէսզի մենք Իր վէրքերով բուժուենք, քանզի Նրա վէրքերը բժշկում են:

Որ բացում է Իր ամենազօր ձեռքերն ու ամեն-քին ներարկում Իր քաղցր կամքով:

Քաղցեց մեր փրկութեան համար, թէպէտ անապատում յագեցրեց հինգ հազար մարդու մի քանի նկանակով:

Պահք պահեց քառասուն օր եւ քաղցեց, որ-պէսզի մենք էլ ծոմաջան աշխատութեամբ մեղ-քերի թողութիւն շահենք:

Թէեւ Կենաց աղբիւր էր՝ ծարաւեց մեղաւոր-ների համար, որպէսզի մեղաւորները նոյնպէս ապաշխարութեան ծարաւ զգան եւ քաւեն յան-ցանքները:

Անսահման է Աստծոյ ողորմութիւնը եւ չափ չկայ Նրա սիրուն, որով սիրեց մեզ, բայց մենք չենք հասկանում այն: Քանի դեռ մեռած էինք

մեղքերի մէջ, կենդանի դարձրեց մեզ Քրիստոս, քանզի «Նա որպէս լոյս եկաւ աշխարհ» *(Յովհ. ԺԲ. 46)*՝ փրկելու մեղաւորներին, չարագործներին, պիղծերին, պոռնիկներին, շնացողներին, արուամոլներին, իգացողներին, կենդանամոլներին, կախարդներին, մարդասպաններին եւ այս տիպի այլ մարդկանց:

Մաքսապետին իրեն աշակերտ դարձրեց, որովհետեւ «ուր որ մեղքը շատացաւ, շնորհն առաւել եւս շատացաւ» *(Հռովմ. 5. 20)*: Նա, որ երէկ մաքսաւոր էր, այսօր դարձաւ Մատթէոս Աւետարանիչ, նոյնպէս եւ հայհոյիչ Պօղոսը ոչ միայն հաւատի դարձաւ, այլեւ երկինք բարձրացաւ, դարձաւ անճառելիին լսող եւ տեսնող, եղաւ «Քրիստոսի բերան» եւ կոչուեց «Սուրբ Հոգու անօթ» եւ բազում այլ շնորհների արժանացաւ: Որովհետեւ այնպէս մեծ ու զարմանալի է Աստծոյ ողորմութիւնը, որ առնում է մաքսաւորին եւ դարձնում Աւետարանիչ, հալածողին ու հայհոյիչին՝ առաքեալ, ուրացողին՝ բանալի երկնքի արքայութեան, աւազակին՝ դրախտի տէր:

Եւ այդպէս բոլոր տեսակի մեղքերի աղտեղի պոռնկական բնութիւնը առաւ Քրիստոս, սրբեց ու արդարացրեց:

Իսկ ի՞նչ է պոռնկութիւնը. այն որկրամոլ ցանկութիւնն է, պարապ գործերը, քնից չկշտանալն է, մտքի թուլութիւնը եւ լկտի խորհուրդները, դատարկ խօսքը, անտեղի ծաղրը:

Ի՞նչ է արծաթասիրութիւնը. այն անհաւատութիւնն է, ագահութիւնը, անյուսութիւնը, անգթութիւնը, անողորմութիւնը, արհամարհանքը, անբարեմտութիւնը, ինքնահաւանութիւնը, ամբարտաւանութիւնը եւ Աստծոյ դատաստանին անտարբեր մնալը:

Ի՞նչ է բարկութիւնը. այն իր կամքը պարտադրելն է, հակառակութիւնը, վիճաբանութիւնը, նենգութիւնը, կարճամտութիւնը, նեղսրտութիւնը, ձանձրոյթը, թշնամանքը չվերացնելով՝ առնելտալը:

Ի՞նչ է նախանձը. այն ատելութիւն է, ընկերոջ բեռը չվերցնելը, եղբօրը գայթակղութեան մէջ գցելը:

Ի՞նչ է փառասիրութիւնը. այն անզգամութիւն է՝ այս աշխարհի բաները սիրելը, իրեն մարդկանց

մէջ անուանի ու երեւելի ցոյց տալը, որ կատարեալ յանդգնութիւն է:

Ի՞նչ է հպարտութիւնը. այն անհնազանդ լինելն է ամենքին, ինքն իր զօրութեամբ քաջալերուելը, իրեն իմաստուն համարելը եւ միայն իր կամքը կատարել տալը՝ արհամարհելով ընկերոջը, իրեն բոլոր մարդկացից գիտուն կարծելը, իրեն այնպէս պահելը՝ կարծես որեւէ բանի կարիք չունի:

Այս ամէնը ներգործում է մարդկանց վրայ, այնքան, որ հեռացնում է նրան Աստծուց, բայց **ողջ սրտով եւ յօժար կամքով արուած ապաշխարութիւնը բոլոր չարիքները հեռու է վանում մարդուց, մերձեցնում է նրան Աստծուն**, արժանի է անում անճառելի կեանքի ու բարի պարգեւների՝ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհներով եւ մարդասիրութեամբ:

Այսքանից յետոյ ինչպէ՞ս է, որ չես քաւում քո մեղքերը, ո՛վ մարդ, չգիտե՞ս, որ մահն է քո առաջ կանգնած, մինչդեռ քեզ համար անհոգ ապրում ես: Բնաւ չես լսում մարգարէին, երբ ասում է՝ «Մեղաւորի մահը չարաչար կը լինի» *(Սաղմ. 33. 22)*, որ այն արժանի է բազում ողբերի ու արտա-

սուքի: Աստուած բարկանում է նրանց վրայ, որ չեն յիշում ապաշխարութիւնը, եւ դու ինքդ էլ շտապում ես բարկացնելու Աստծուն քո անարժան գործերով, ո՛վ մեղաւոր: **Նաեւ նանո՛վ ես մեղք գործում, որ չես ապաշխարում**, մեղքերի վրայ նոր մեղքեր ես կուտակում: Այդպիսով չես մտնի Աստծոյ արքայութիւնը, քանզի Աստուած ոչ թէ մեղաւորներին է ատում, այլ դարձի չեկողներին:

Ո՛վ մեղաւոր, փութա՛ հաշտեցնելու քեզ Աստծոյ հետ, եւ արա՛ այնպէս, ինչպէս Պետրոս հաւատի վէմը վարուեց: Մեղա՛յ ասա մեղքերիդ համար եւ դառնապէս լաց եղիր, քանի որ բարերար ու մարդասէր մեր Տէրը ճշմարիտ գիտութեամբ դարձի գալն ու մեր փրկուելն է կամենում, եւ ոչ թէ մահը:

Ողորմութիւն է կամենում Քրիստոս, որ ողորմաց մարդկանց եւ Իր անձը տուեց հեթանոսների ու մեղաւորների փրկութեան համար, քանզի կամենում է, որ ճշմարիտ գիտութեանը դառնան եւ ապրեն:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՂՋՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ողորմած է Տէրը, ուրեմն անյոյս կորստեան չպիտի մատնուենք:

Ահա եկաւ երկնաւոր թագաւորը, որ սիրում է մոլորեալների դարձը, արդ՝ որեւէ մէկը այլեւս չպիտի սատանային ծառայի:

Ահա ծագեց արեգակն արդարութեան, որեւէ մէկը թող չնստի խաւարի եւ մահու ստուերի մէջ:

Ահա՛ ճշմարիտ լոյսը Քրիստոս, որեւէ մէկը խաւարում թող չքայլի:

Ահա հասաւ երկնաւոր բժիշկը, որեւէ մէկը առանց ապաշխարանքի թող չկորչի:

Ո՛վ սիրելիներ, դիմեցէ՛ք Քրիստոսին եւ ապաւինէ՛ք Նրա մարդասէր ողորմութեանը:

> Դարձէ՛ք դէպի բարերար Հայրը, քանզի յոյժ մարդասէր է, անյոյս մի՛ եղէք եւ մի՛ ծուլացէք ապաշխարութեան գալ, քանզի Քրիստոս մեղաւորների դարձի համար խոնարհուեց երկնքից եւ իջաւ երկիր:

Մեղաւորների ապաշխարութեան համար Բանն Աստուած խանձարուրով պատուեց եւ տնանկի նման մսուրը դրուեց:

Մեղաւորների արդարանալու համար ամենայնի Տէրը յայտնուեց աշխարհում:

Մեղաւորների փրկութեան համար Միածինն առաքուեց բարձունքներից եւ մոլորեալներին վերադարձրեց հայրենի տունը:

Մեղաւորների փրկութեան համար Տէրը ծառայ եղաւ:

Մեղաւորների ազատութեան համար անմահը մահացաւ:

Մեղաւորների փրկութեան համար քաղցեց, ծարաւեց Աստծոյ Որդին:

Մեղաւորների փրկութեան համար ամենայնի Աստուած ապտակ ընդունեց:

Մեղաւորների փրկութեան համար Աստծոյ Որդին փշով պատուեց:

Մեղաւորների փրկութեան համար Տէրը Խաչի վրայ բեւեռուեց:

Մեղաւորների փրկութեան համար փառքի Տէ-րը լեղի եւ քացախ ճաշակեց:

Մեղաւորների փրկութեան համար ամենքի բարերարը մահուան դատապարտուեց:

Մեղաւորների փրկութեան համար խոցուելով վիրաւորուեց Միածինն Աստուած:

Սատանայի գործերը լուծանելու համար օրէնս-դիրը «անօրէններին հաւասար համարուեց»:

Անյոյսներին յոյս բերելու համար կապուեց եւ չարչարուեց Եւայի երկունքի լուծիչը:

Մեզ արդարացնելու համար գեղարդով խոց-ուեց Փրկիչը:

Ահա այս ամէնը մեզ՝ մեղաւորներիս համար յանձն առաւ Փրկիչը, որպէսզի կատարուի մար-գարէի խօսքը, որ ասում է՝ «Նրա՛ վէրքերով մենք

բժշկուեցինք» *(Եսայի 53. 5)* եւ «Մեր մեղքերը վերացրեց իր չարչարանքներով» *(հմմտ. Եսայի 53. 11)*: Իսկ ով որ խոցել էր Յիսուսի կողը, նոյն խոցուած տեղը առողջութիւն բերեց խոցողին:

Դու, ասում է, ինձ խոցեցիր, բայց ես քեզ կը բժշկեմ եւ կ'առողջացնեմ:

Դու խոցեցիր ինձ որպէս թշնամի, իսկ ես բժշկեցի քեզ որպէս սիրելի:

Դու խոցեցիր իմ կենդանի կողը, որից արիւն եւ ջուր ելաւ, իսկ ես փրկութիւն կը լինեմ քո տեսանելի ու անտես վերքերի համար:

Դու խաւարած ես մեղքերի մէջ, իսկ ես ճշմարիտ լոյս եմ, որ լուսաւորում է քեզ եւ ամենքին:

Ահա, ո՛վ սիրելի, կամեցի՛ր տեսնելու Աստծոյ բազում մարդասիրութիւնը:

Արդ՝ եթէ Նա, որ անմեղ է ամէն ինչում, այնքան չարչարանքներ կրեց քեզ համար, դու՞ ինչ ես կամենում Նրա մարդասիրութեան փոխարէն տալ: Եւ այդ փոխարէնը ոչ թէ Նրա համար ես տալիս, այլ քո անձիդ, որպէսզի փրկել տաս քո հոգին:

Լա՛ց եղիր քո մեղքերի համար, հոգոց հանիր, բարի գործերով ապաշխարի՛ր:

Խոստովանի՛ր մեղքերդ եւ ասա՛ մեղայ, մեղայ:

Ապաշխարի՛ր եւ զղջա՛:

Մի՛ ասա, թէ ծերութեան հասնեմ կ՚ապաշխարեմ, իսկ գուցէ երիտասարդ հասակի՞ն էլ չհասնես եւ մահանաս ծանրացած մեղքերով:

Ասա տեսնեմ, եթէ իժ յայտնուի քո գարշապարին, որ պատրաստ է քեզ սպանել, չե՞ս զարհուրի եւ դողայ նրանից ու հեռու չե՞ս փախչի: Իսկ ինչպէ՞ս է, որ չես զարհուրում եւ փախչում մեղքերից, որ բոլոր տեսակի իժերից, կարիճներից չարագոյնն է եւ քեզ գեհենի բաժին դարձնելու առիթի է սպասում: Իժը չէ՞ր, որ ելաւ Պօղոսի ձեռքը եւ ոչ մի վնաս չպատճառեց սրբին *(Գործք 28. 3)*: Իսկ մեղքերը մեծամեծ վնասներ են պատճառում, որից ցաւեր ու հեծեծանք, անէծք ու տրտմութիւն է լինում:

Մեղքերից է ծնուել «քրտինքով վաստակելու» անէծքը:

Մեղքերի պատճառով է ասում՝ «Հող էիր եւ հող դարձի՛ր» *(Ծնն. 3. 19)*:

Մեղքերի պատճառով մահը թագաւորեց:

Մեղքերի պատճառով արտաքսուեցին դրախտի փափկութիւնից:

Մեղքերի պատճառով ջրհեղեղ եղաւ եւ խորտակեց ամէն ինչ:

Մեղքերի պատճառով հրացայտ անձրեւը կործանեց Սոդոմն ու Գոմորը:

Մեղքերի պատճառով եղան գեհենն ու խաւար աղջամուղջը:

Մեղքերի պատճառով է ասւում՝ «Կապեցէ՛ք դրա ոտքերն ու ձեռքերը եւ դո՛ւրս հանեցէք դրան արտաքին խաւարը» *(Մատթ. 22. 13):*

Մեղքերից է, որ զանազան մեծամեծ տանջանքներ են պատրաստուել մեղաւորների համար՝ հրեղէն գետեր, բորբոքուած հնոց, խաւար աղջամուղջ, անքուն վիշապ, աչքերի լաց, ատամների կրճտոց, էլ չենք ասում թագաւորի ահազդու ձայնի մասին, որ գոչում է՝ «Անիծեալնե՛ր, գնացէ՛ք ինձնից յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի եւ իր հրեշտակների համար» *(Մատթ. 25. 41)*:

Այս ամէնը պատրաստուած է մեղաւորների համար: Ուստի աղաչում եմ, սիրելինե՛ր, այստե՛ղ արտասուէք, հոգոց հանէք, յիշէք՝ ինչ պիտի գործէք եւ մեղայ ասէ՛ք:

Անյոյս մի՛ եղէք, ասելով՝ ապաշխարութեան եւ կեանքի փրկութեան ոչ մի հնարաւորութիւն չունենք, մեղքերն աւելին չեն, քան Աստծոյ գթածութիւնն է, քանզի բազում է Նրա ողորմութիւնը եւ անչափելի է մարդասիրութիւնը Նրա:

Տե՛ս Աստծոյ անչափ մարդասիրութիւնը, որ կանչում է չարագործներին եւ բարեգործ դարձնում:

Կանչում է մեղքի մէջ սեւացածներին եւ սպիտակ ձիւնի նման ճերմակացնում:

Կանչում է սեւ ագռաւների նմաններին եւ սպիտակ աղաւնու նման դարձնում:

Կանչում է յափշտակող գայլերին եւ անմեղ գառներ դարձնում:

Իր ողորմութիւնը ցողում է մեղաւորների վրայ, ինչպէս որ Իր արիւնը թափելով փրկեց մեղաւորներին եւ յաւիտենական կեանքին արժանի դարձրեց:

Տե՛ս Աստծոյ մարդասիրութիւնը, որ ասում է՝ «Եկէ՛ք ինձ մօտ, բոլոր հոգնածներդ ու մեղքերով բեռնաւորուածներդ, եւ ես ձեզ կը հանգստացնեմ» *(հմմտ. Մատթ. 11. 29)*, քանզի ես հեզ եմ եւ իմ քաղցրութեամբ ամենքիդ ընդունում եմ, ամենքիդ բժշկում, ամենքիդ առողջացնում, ամենքիդ լուսաւորում, ամենքի ցաւերը փարատում, քանզի զարմանալի մի դեղ ունեմ՝ սիրում եմ մոլորուածների դարձը, կեանք եւ ոչ թէ մահ եմ կամենում: Յոյսներդ դրէ՛ք իմ ողորմածութեան վրայ, թէկուզ խիստ մեղաւոր լինէք՝ եկէ՛ք ինձ մօտ եւ ես կ'արդարացնեմ ձեզ, քանզի ես եմ ճշմարիտ լոյսը, ես եմ լոյսը խաւարածների համար, ես եմ մեղաւորների մեղքերը քաւողը:

Արդ՝ եթէ այսպիսի ողորմած Տէր ունենք, ուրեմն անյոյս կորստեան չպիտի մատնուենք, քանզի ասում է՝ «Ուր Ես լինեմ, դուք էլ այնտեղ կը լինէք», եւ՝ «Ինձ հաւատացողներին կը նստեցնեմ Իմ աջ կողմում..., որպէսզի տեսնեն Իմ փառքը» (*Յովհ. 17. 24):*

Ո՛վ սիրելի, բացի՛ր աչքերդ եւ տես Աստծոյ մարդասիրութիւնը, նայի՛ր եւ տես Նրա բարերար գթութիւնն ու ողորմութիւնը:

Եկ եւ խոստովանի՛ր քո մեղքերը եւ ասա՛ մեղայ: **Մի՛ քողարկիր քո վէրքերը, այլ յայտնի՛ր քահանային, եւ նա թողութիւն կը շնորհի քեզ**:

Փրկի՛ր քո անձը մահուանից, որ չմեռնես յաւիտենական վախճանով: Քանզի «Մեղաւորի մահը չարաչար կը լինի» *(Սաղմ. 33. 22)*, ասում է մարգարէն, եւ այն էլ՝ խիստ չարաչար, քանի որ մեղաւորների համար տանջանքներ ու սաստիկ դժոխ է պատրաստուած:

«Բայց դու նախ խոստովանի՛ր քո անօրէնութիւնները, որ արդարացուես» *(Եսայի 43. 26)*: Լսի՛ր Փրկչին, որ ասում է՝ «Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղաւորներին՝ ապաշխարութեան» *(Ղուկ. 5. 32)*: Նաեւ ասում է՝ պոռնկի արտասուքն ընդունեցի եւ սրբեցի նրան ամէն ինչից: Զաքէոսի տունը մտայ եւ այն եկեղեցի արի եւ նրա սեւացած ոգին ձիւնի նման ճերմակ դարձրի: Վերցրի աւազակին եւ դրախտ տարայ: Կանչեցի հայհոյիչին եւ առաքեալ դարձրի:

Դու տե՛ս, սիրելի, Աստծոյ անսահման սէրն ու մարդասիրութիւնը, որ մեղաւորներին արդարացնում

է, վիրաւորներին բժշկում, մարդկանց հաւասարեցնում հրեշտակներին, երկրաւորներին երկնայիններ դարձնում:

Ո՛վ մոլորեալ, նայի՛ր ուրեմն ճշմարիտ լոյսին եւ ճանաչի՛ր այն, դիմի՛ր Տիրոջը, որպէսզի լսի քեզ, սիրի՛ր Քրիստոսին, եւ կը սիրի քեզ:

Ահա ծագեց արդարութեան արեգակը՝ Քրիստոս, իսկ դու ինչպէ՞ս ես նստում խաւարում:

Ահա բացուեց կեանքը, իսկ դու ինչու՞ ես մահը նախընտրում:

Ահա բխեց կենդանի ջուրը, իսկ դու ինչպէ՞ս ես ծարաւից մեռնում:

Ահա եկաւ կեանքի առաջնորդը, իսկ դու ինչու՞ ես սատանային հետեւում:

Ահա հասաւ երկնաւոր բժիշկը, իսկ ինչպէ՞ս է, որ դու վիրաւորուած ես մնում եւ չես կամենում բժշկուել:

Ո՛վ եղբայր, յիշի՛ր յաւտիենական բարիքը եւ կեանքը յաւիտենական: **Բարի է Աստծոյ ողորմութեանն ապաւինելը, միայն դարձի՛ր դէպի Նա,**

որպէսզի Փրկիչն էլ մեղաւորին դարձի բերի այն-պէս, ինչպէս աւազակը արդարացաւ, երբ տեսաւ ճշմարիտ լոյսը, հաւատաց լոյսին եւ արդա-րացաւ: Քանզի աւազակը մինչ այդ ամէն տեսա-կի չարիքի կցորդ էր. յափշտակող էր, չարագործ, մեղաւոր, աներկիւղ եւ լցուած էր շատ այլ մեղքերով, բայց յետոյ երկնային արքայութեան ժառանգորդ եղաւ եւ բացեց դրախտի փակուած դուռը, որի համար Փրկիչն ասաց՝ «Այսօր Ինձ հետ կը լինես դրախտում»:

Աստծոյ երկիւղին հաւասար որեւէ բան չկայ: Տե՛ս, թէ երկիւղն ինչ զօրութիւն ունի, որ գայլե-րին գառ է դարձնում, մեղաւորներին՝ արդար, պիղծերին՝ սուրբ, մարդկանցից հրեշտակ է ստա-նում, մաքսաւորներից՝ Քրիստոսի աշակերտներ, անբարոներին քահանայութեան աստիճանի է հասցնում, զրկողներից իրաւարարներ է պատ-րաստում, մոլորեալներին ճշմարիտ գիտութեան է բերում, խաւարեալներին լուսաւորում է:

Եւ ով չի երկնչում Աստծուց՝ հանապազ բար-կացնում է Նրան, հանապազ սատանայի ծառա-յութեան մէջ է, մշտապէս Աստծուն հակառակ է գործում, ինչպէս Հեղիի որդիները, որ Աստծուց

երկիւղ չունէին եւ կորստեան մատնուեցին, եւ տապանակն էլ գերութեան տարուեց *(տե՛ս Ա Թագ. 3. 11-18)*:

Այդպէս եւ ամէն մարդ, որ չի երկնչում Աստծուց, իր համար պատրաստուած կը գտնի գեհենը, աչքերի լացն ու ատամների կրճտոցը, արտաքին խաւարն ու ներքին տարտարոսը, հրեղէն գետերն ու սոսկալի սառնամանիքները, բորբոքեալ հուրն ու անքուն սողունը: Բայց դու լսի՛ր թագաւորի ահեղ ձայնը, որ ասում է՝ «Գնացէք ինձանից դէպի յաւիտեան հուրը» *(Մատթ. 25. 41)*:

Իսկ ով երկիւղ ունի Աստծուց, մեծամեծ պարգեւների արժանի կը լինի, ինչպէս որ աւազակը երկնչեց Աստծուց եւ ճանաչեց փառքերի Տէր Քրիստոսին, եւ նրա համար ամենայն բարութիւններ պատրաստուեցին, քանզի Խաչի վրայ սաստելով ասաց՝ «Չե՞ս երկնչում Աստծուց, որի պատիժն ես կրում, ո՛վ աւազակ»: «Այո՛, ասաց նա, երկիւղի ու զարհուրանքի մէջ եմ»: «Իսկ ինչպէ՞ս է, որ մինչ այսօր չէիր երկնչում»: Եւ նա ասաց. «Պատճառն այն էր, որ Տիրոջ երկիւղը չէի յիշում, մարդկանց տրտմեցնում էի, շատերին հարուածում, ոմանց ոսկին ու արծաթը յափշտա-

կում, շատերին կապում էի ու տանջում, չար էի, ապիրատ, Աստծոյ եւ մարդկանց համար՝ ատելի, չէի երկնչում Աստծուց: Իսկ այսօր այս պահին ահա Աստծոյ երկիւղը յիշելով խրատում եմ ինձ ու ընկերոջս»:

Խիստ զարմացած եմ քեզ վրայ, ո՛վ աւազակ, մեկնաբանի՛ր ինձ, աղաչում եմ: Դու, որ մի ժամանակ աներկիւղ շրջում էիր չարիքի ու մոլորութեան մէջ, իսկ այժմ ահա զարհուրած դողում ես եւ ուսուցանում ես ընկերոջդ, ինչպէ՞ս սկսեցիր Աստծոյ երկիւղն ունենալ, որից չէիր երկնչում, ինչպէ՞ս ճանաչեցիր փառաց Տիրոջը եւ անգամ ջատագովում ես Նրա համար: Օրէնք չգիտես, մարգարէներից տեղեակ չես, Տիրոջ նշանները չես տեսել, իսկ ովքեր մարգարէանում էին եւ ասում, թէ պիտի չարչարուի, մեռնի եւ երրորդ օրը յարութիւն առնի՝ այդ ամէնի մասին չես էլ լսել: Ուրեմն ինչպէ՞ս լուսաւորուեցիր եւ որտեղի՞ց սովորեցիր ու մարդկանցից առաւել եղար: Պարզ է, որ եթէ Տիրոջ երկիւղը քեզ ուսուցանեց, ապա իրօք պէտք է այդպիսի հաւատքդ ի ցոյց դնես եւ ուրախացնես հրեշտակներին երկնքում:

Ո՛վ աւազակ, ումի՞ց լսեցիր, որտեղի՞ց լուսաւորուեցիր, ո՞վ ուսուցանեց քեզ այդ վարդապետութիւնը, քանզի անգամ խաչիդ վրայ սաստում էիր ընկերոջդ, թէ՝ «Աստծուց չե՞ս վախենում դու, որ նոյն պատիժն ես կրում» *(Ղուկ 23. 40)*: Ու դարձեալ ասացիր Տիրոջը, թէ՝ «Յիշի՛ր ինձ, Տէ՛ր, երբ գաս քո թագաւորութեամբ», որտեղի՞ց գիտէիր, թէ Նա է Տէրը արքայութեան: Դրա համար է, որ լսեցիր Նրանից անսուտ պատասխանը, թէ՝ «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կը լինես» *(Ղուկ. 23. 43)*:

Չկայ աւելի երանելի մէկը, քան այդ աւազակը, եւ նրա նման հաւատացող չկայ, քանզի չէր տեսել Տիրոջ փառքը, բայց հաւատաց, երբ յանցանքի համար խաչն էր բարձրացւում: Ոչ նշաններ էր տեսել, ոչ մեռելների յարութիւն, ոչ բորոտի սրբուելն ու կոյսի լուսաւորուելը, ոչ էլ ծովի ալիքների սանձումը ու հողմի դադարեցումը, չէր տեսել դիւահարին, որին բժշկեց Տէրը, ոչ էլ չորսօրեայ մահացած Ղազարոսին, որին յարութիւն տուեց Տէրը: Եւ ինչպէ՞ս բոլոր նշանները մէկ առ մէկ թուարկեմ, քանզի դրանց բոլորից անտեղեակ էր եւ անյաղորդ:

Բայց տեսնում էր Տիրոջը Խաչի վրայ բեւեռուած եւ փշով պսակուած եւ ամենքի կողմից նախատինքի արժանացած: Ոմանք ծաղրում էին, ոմանք՝ այպանում: Ոմանք երեսին էին թքում, ոմանք՝ ապտակում: Ոմանք հայհոյում էին, ուրիշները՝ բռունցքով հարուածում: Ոմանք լեղի էին մատուցում, ուրիշները քացախ էին տալիս:

Աւազակը նայում ու տեսնում էր այս ամէնը, եւ արքայութեան Տիրոջն էր դաւանում Խաչի վրայ: Ուրեմն մենք իրապէ՛ս պէտք է զարմանանք նրա հաւատքի վրայ, որ տեսնում էր Քրիստոսի կրած այդչափ անարգանքները, բայց ամօթ չէր համարում Նրան հաւատալ: Փայտին գամուած Տիրոջն էր խոստովանում եւ ասում՝ «Յիշի՛ր ինձ, Տէ՛ր, երբ գաս քո թագաւորութեամբ»: Որեւէ մէկը թող չասի, թէ անտեղի մտքով դա արտաբերեց, այլ Աստուածութեան փառքը ճանաչեց, Յիսուսին Տէր եւ Աստուած խոստովանեց:

Եւ ասաց խաչը հանողներին՝ Նա, որ գամուած է փայտին մեծ թշնամանքով, Նա Ինքն է Իր փառքով սուրբ հրեշտակներով գալու՝ դատելու երկիրը: Եւ այնժամ կը հատուցի իւրաքանչիւրին իր գործերի համար: Որովհետեւ եթէ այժմ այս-

տեղ անտեսանելի ու ծածուկ է Նրա փառքը, բայց յետոյ յայտնի կը դառնայ, եւ ոչ ոք չի կարողանայ դէմ յանդիման կանգնել: Քանզի «Մեծ է Տիրոջ օրը, մեծ եւ խիստ նշանաւոր. ո՞վ կարող է դիմանալ դրան» *(Յովէլ 2. 11)*: Եւ նրան, որ հիմայ նախատում ու արհամարհում էք, այնտեղ տեսնել անգամ չէք կարողանայ: Եւ ոչ միայն դուք, այլեւ հրեշտակներն ու հրեշտակապետերը չեն կարողանայ տեսնել Նրա փառքը: Ում որ դուք այստեղ կամենում էք սպանել, Նա բոլոր սպանուածներին կը կենդանացնի: Եւ ում որ մոլորեցնող էք անուանում, Նա խափանելու է աշխարհի բոլոր մոլորութիւնները եւ տիեզերքը բերելու է ճշմարիտ գիտութեան եւ վերստին գալու է երկնային վերին ամպերից:

Այս ամէնի մասին վարդապետում էր աւազակը խաչի վրայ եւ ամօթանք էր տալիս հրեաներին: Ի՞նչ տեսար դու արդեօք, ո՛վ աւազակ, որ խաչեալին Տէր ես կոչում եւ մեծ բաղձանքով Նրանից հայցում ես, թէ՝ «Յիշի՛ր ինձ, Տէ՛ր»:

Եւ դա լսելով՝ Փրկիչը պատասխանեց ու ասաց. «Տեսար Ինձ մեծ անարգանքի մէջ, բայց իմ նախատինքը ամօթալի չհամարեցիր, որով իմ

թշնամիները նախատեցին ինձ, փոխարէնը դու ինձ իմ թշնամների առաջ ասում ես՝ «Դու ես Տէրը, որ գալու է արքայութեամբ»: Արդ՝ Ես էլ կը խոստովանեմ քեզ Իմ Հօր առաջ, որ երկնքում է, եւ այժմ էլ ասում եմ քեզ՝ այսօր Ինձ հետ կը լինես դրախտում»:

Սրանից աւելի մեծ ի՞նչ կարող է լինել, ո՞վ սիրելիներ, քան մշտապէս լինել Քրիստոսի հետ եւ ժառանգել դրախտի փափկութիւնը: Մեծ պատուի արժանացաւ աւազակը՝ խօսելով Քրիստոսի հետ: Իսկ այժմ ահա նա կը լինի մշտապէս Քրիստոսի հետ եւ կը ժառանգի առքայութեան փառքը, դրա մասին ո՞վ կարող էր երեւակայել, էլ չենք ասում՝ խօսել կամ ճառել:

Իսկ Խաչի պայծառութեան մասին ո՞վ է ի վիճակի պատմելու, քանզի երբ Քրիստոս գայ, նախապէս տէրունական Սուրբ Խաչը ուրբաթ օրը արեւելքից պիտի փառքով ծագի արեգակից եօթնապատիկ առաւել պայծառ լոյսով: Այնժամ երկնային զօրութիւնները պիտի շարժուեն, Խաչի թշնամիները կործանուեն ու ամօթով պատուեն, մեծաձայն ողբով պիտի հառաչեն եւ սատանայի նման հուրն ու արտաքին խաւարը նետուեն: Իսկ

Սուրբ Խաչին հաւատացողները փառքով պիտի զարդարուեն եւ ամպերի մէջ պարուրուեն Տիրոջն ընդառաջ եւ ամենայն ժամ Տիրոջ հետ կը լինեն *(Ա Թեսաղ. 4. 16)*:

Իսկ մենք մեր Տիրոջ Խաչով պիտի պարծենանք, ինչպէս ասում է երանելի Պօղոսը: **Աստծոյ գործերի մէջ չկայ աւելի մեծ նշան, քան Խաչը**, եւ չկայ աւելի մեծ ու պատուական բան, քան Խաչը:

Ուրեմն՝ եղբայրնե՛ր, շտապե՛նք աւազակի պատուին հասնելու, քնով չընկնենք եւ զուարթ մնանք ու բոլոր առաքինութիւնները կատարենք:

> Մշտապէս աղաչենք բազումողորմ Աստծուն՝ մեզանից հեռացնելու ամէն տեսակի չարութիւնները՝ բարկութիւնը, սրտմտութիւնը, նախանձը, ատելութիւնը, ագահութիւնը, անհաւատութիւնը, ոխակալութիւնը, հպարտութիւնը, ամբարտաւանութիւնը, անյուսութիւնն ու ամէն բան, որ Աստծոյ կամքով չէ:

Բարիք գործենք, որպէսզի փրկուենք սատանայի որոգայթներից եւ արժանի լինենք բնակուելու յաւիտենական յարկերում:

Արդ, ո՛վ սիրելիներ, ուշադրութեամբ լսէ՛ք, որովհետեւ օգտակար է այս խօսքը: Սուտ եւ խաբուսիկ է այս աշխարհը, եւ իզուր են մարդիկ նրանով տարւում: Ահա տեսէ՛ք եւ մտածէ՛ք, թէ Ադամից մինչեւ այսօր ո՞վ է հեշտութեամբ այս կեանքի համար վճարել: Հեռու՛ փախչենք նրա որոգայթներից եւ հետեւենք Քրիստոս Աստծոյ սիրուն: Մեր աչքերից արտասուք թափենք եւ ապաշխարենք մեր մեղքերի համար, ինչպէս որ երանելի Դաւիթն էր բազում արտասուք թափում իր մեղքերի համար եւ ասում. «Ես որպէս մի մարդ մեղանչեցի, եւ դու՛, Տէ՛ր, ինչպէս Աստուած թողութիւն տուր ինձ» (*հմմտ. Սաղմ. 40. 5)*, որպէսզի Քո ողորմութեամբ լցուեմ եւ Քո մարդասիրութեամբ ազատուեմ: Եւ Աստուած տարածեց Իր ողորմութիւնը մարգարէի վրայ, քանզի Նա սպասում է ապաշխապութեանն ու շուտափոյթ այրում է մեղքերի բոլոր սկզբնապատճառները:

Դրա համար եւ դու, սիրելի՛, շտապի՛ր ապաշխարելու, փութա՛ պահքի եւ աղօթքի, արտասու-

քի, ողորմութեան եւ աղքատսիրութեան: Որպէս-զի երկնային արքայութեան մէջ Աստծոյ բոլոր սրբերի հետ երկնքի բարիքները տեսնես ու վա-յելես, հրեշտակների հետ պար բռնես, արդար-ների հետ հրճուես, սուրբերի հետ խնդաս եւ Քրիստոսի հետ ուրախանաս: Այդ ամէնին թող որ մենք կարողանանք հասնել մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրու-թեամբ, Որին վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս:

ՉԿԱՅ ՈՐԵՒԷ ԲԱՆ, ՈՐ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆԸ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԻ

Ամենայն ժամ բարի գործէք, քանզի հենց հիմա՛ է փրկութեան պահը:

Առաքինի վարքի մասին գրքերում բազմաթիւ պատկերներ կան, դրանցից որը կամենում ես՝ պատկերի՛ր քո հոգում, ինչպէս որ ուսուցչից աշակերտների մօտ է տարբեր կերպ պատկերանում: Քանզի մէկը որեւէ բան չստանալով է պայծառանում, ինչպէս որ Եղիան էր, մէկ ուրիշը ունեցուածքով, ինչպէս Աբրահամը. դրանցից որը քեզ համար պատշաճ ես համարում՝ դրանով էլ առաջնորդուի՛ր:

Դարձեալ՝ մէկը ամուսնութեամբ է պայծառանում, ինչպէս Աբրահամը, եւ միւսը կուսութեամբ, ինչպէս Եղիան. դու որ ճանապարհով որ կամենում ես՝ նրանով գնա, երկուսն էլ կարող են երկինք տանել:

Դարձեալ՝ մէկը պահքով եւ միւսը առանց պահքի է պայծառանում: Յովհաննէսը՝ պահքով, իսկ Յոբը կնոջ, տան, որդիների եւ դուստրերի համար էր հոգ տանում եւ բազում հարստութեան տէր էր: Իսկ Յովհաննէսը չունէր ոչինչ, այլ միայն բրդեայ մի հագուստիկ: Իսկ ի՞նչ ասեմ պալատների, հարստութեան ու գանձերի, անգամ թագաւորութեան մասին, դրանց մէջ որեւէ մէկը կարո՞ղ է առաքինութիւն ստանձնել:

Բոլոր շինականների տների համեմատ շատ աւելի մեծազբաղ են թագաւորական տները: Չնայած դրան՝ Դաւիթն իր թագաւորութեամբ պայծառացաւ, ու ծիրանի թիկնոցը կամ թագը չշեղեցին նրա ընթացքը: Իսկ մէկ ուրիշին վստահուեց բազմահազար բանակի հրամանատարութիւնը, Մովսէսի մասին եմ ասում, որը վարելը մեծ դժուարութիւն էր:

Տեսնու՞մ ես, որ կան հարուստ, բայց առաքինի մարդիկ: Տեսնու՞մ ես, որ կան աղքատ ու նահատակ մարդիկ թէ՛ ամուսնութեամբ, թէ՛ կուսութեամբ: Տեսնու՞մ ես, կայ նաեւ դրա հակառակը, որ ամուսնութեան եւ կուսութեան, աղքատութեան եւ հարստութեան մէջ կարող են կորստեան մատնուել: Մարդկանցից շատերը ամուսնութեամբ կործանուեցին, ինչպէս Սամսոնը, բայց ո՛չ թէ հենց ամուսնութեան, այլ իր պատճառով: Շատերն էլ՝ կուսութեամբ, ինչպէս հինգ կոյսերը, հարստութեամբ՝ ինչպէս այն հարուստը, որ Ղազարոսին անտեսեց, եւ աղքատութեամբ՝ ինչպէս որ այժմ շատ-շատերը կորչում են:

Նաեւ կարող ենք կորստեան մատնուած թագաւորների ու մեծ զօրապետերի օրինակներ բերել. եթէ կամենում ես, կարող ես տեսնել զիւնորութեան մէջ եղածներից շատ փրկուածների, ինչպէս Կոռնէլիոսը, կամ պալատի ծառայութեան մէջ եղածներից, ինչպէս եթովպիացի ներքինին:

Եւ այդպէս, եթէ հարստութիւնը լաւ նպատակներով գործածենք ամէն առումներով, մեզ համար վնասա-

կար չի լինի, բայց եթէ բարուք չվատնենք՝ կորստեան կը մատնի:

Այդպէս նաեւ թէ՛ թագաւորութիւնը, թէ՛ աղքատութիւնը զգօն մարդուն չեն կարող վնասել, ինչպէս որ գերութիւնն իսկ վնասակար չեղաւ, ոչ էլ աղքատութիւնն ու վատնումը: Յիշի՛ր Յովսէփին, որ ծառայ եղաւ, բայց առաքինութիւնը անխաթար պահեց, յիշի՛ր Դանիէլին եւ երեք մանուկներին, որ գերի էին, բայց ինչպէ՞ս պայծառագոյն դարձան:

Ամենուր առաքինութիւնը պայծառ է պահում, եւ որեւէ մէկը չի կարող այն ապականել, չկայ մի բան, որ այն խափանել կարողանայ, առաւելեւս՝ աղքատութիւնը, գերութիւնը, ծառայութիւնն ու սովը, ցաւը կամ ծանր չարչարանքները, որով Յոբն ու Ղազարոսը եւ այլք տանջուեցին:

Տեսնու՞մ ես, **չկայ որեւէ բան, որ առաքինութիւնից բարձր լինի՝** ո՛չ իշխանութիւնն ու տէրութիւնը, ո՛չ ցաւերն ու անարգանքը, ո՛չ պատուից ցած ընկնելը:

Առաքինութիւնն այս ամէնը երկրի վրայ թողնելով՝ երկինք է բարձրացնում, միայն թէ ոգի՛ն

առաքինի լինի: Չկայ որեւէ բան, որ արգելք լինի առաքինութեան համար. երբ մշակը առողջ է, արտաքին որեւէ բան չի կարող նրան խանգարել, այդպէս էլ երբ ճարտարապետը հմուտ լինի իր արուեստում եւ սրտանց գործի, թէկուզ եւ ցաւեր կամ աղքատութիւն վրայ հասնեն՝ չի տկարանայ իր գործի մէջ, մինչեւ որ այն աւարտին չհասցնի:

Այդ պատճառով ամենայն ժամ պէտք է բարի գործենք, ինչպէս որ պատգամում է Աստծոյ Ս. Հոգու տաճար ու անօթ Սուրբ Պօղոսը. «Ահա հիմա՛ է ընդունելի ժամանակը, ահա հիմա՛ է փրկութեան օրը» *(Բ Կորնթ. 6. 2):*

Որեւէ կերպ առիթ մի՛ տուէք, որ պաշտօնը ձեզ արատաւորի, այլ ամէն ինչում ինքներդ ձեզ սուրբ ու անարատ պահէք: Առաքեալների գլուխ Պետրոսը հրամայում է՝ «Քրիստոս մարմնով չարչարուեց մեզ համար, դուք եւս զինուեցէ՛ք նոյն մտքով» (*Ա Պետր. 4. 1):* Քանզի ով չարչարւում է մարմնով, դադարում է մեղք գործելուց: Ու նաեւ՝ «Արթո՛ւն եղէք, հսկեցէ՛ք, քանի որ ձեր ոսոխը՝ սատանան, մռնչում է առիւծի պէս, շրջում եւ փնտրում է, թէ ում կուլ տայ» *(Ա Պետր. 5. 8):*

Վա՛յ ամբարիշտին, քանզի երբ ամենքը լուսաւորւում են, միայն նա է խաւարի մէջ մնում:

Վա՛յ հայհոյողին, քանզի կապում է իր լեզուն եւ չի կարող պատասխան տալ Դատաւորին:

Վա՛յ անօրէնին, քանզի խիստ ու արդար դատաւորի առաջ է կանգնելու:

Վա՛յ ագահին, քանզի հարստութիւնը կը լքի նրան, եւ անշէջ հուրը կ'ընդունի:

Վա՛յ ծոյլին, քանզի նրանից կը պահանջուի այն ժամանակը, որը ծուլութեամբ է անցկացրել:

Վա՛յ ամբարտաւանին, որ երբ գերեզման մտնի, կը հասկանայ, թէ ով է իրականում:

Վա՛յ պոռնկասէրին, որ աղտեղացնում է արքունի հարսանիքն ու հարսանեկան քողը, նա ամօթով տանջանքների կը մատնուի:

Վա՛յ բամբասողին եւ նրա հետ արբեցողներին, նրանք սպանողների ու պոռնիկների հետ պիտի դատուեն:

Վա՛յ փափկասունին, այն անցողիկ մի բան է եւ ընդամենը մորթուող պարարտ հորթի է նմանում:

Վա՛յ կեղծաւորին, հովիւը կ’ուրանայ նրան եւ դատաւորը հօտի վրայ կարգուած գայլ կը համարի:

Վա՛յ բարկացողին, որ բարու հետ որեւէ համեմատութեան եզր չունի, քանզի վրէժխնդիր է Դատաւորին:

Վա՛յ ոխակալ ու անողորմ մարդուն, քանզի անհաշտ ու անողորմ դաստաստանի կը հանդիպի:

Երանի՛ ով բարձր է վարքով եւ խոնարհ է մտքով, քանզի այդպէս Քրիստոսին է նմանում եւ Նրա աջ կողմում նստում:

Երանի՛ ով գնում է նեղ ճանապարհով, քանզի լուսազգեստ ու սուրբ կը մտնի երկինք:

Երանի՛ ով թողնում է իր բոլոր ցանկութիւնները, քանզի նրա դէմ մարտնչելուց դողում են դեւերը:

Երանի՛ ով սուրբ է հոգով եւ անկեղծ՝ առաքինութեամբ, քանզի դատելու է աշխարհը եւ ոչ թէ ինքն է դատուելու աշխարհի հետ:

Երանի՛ ով խոստովանութեամբ ցրում է չարիքը եւ ժողովում է բարիքը, նա առաքինութեամբ եւ սրբութեամբ սուրբերի առաջ կը կանգնի:

Եւ ամենակարեւորը խօսքիս մէջ. ո՛վ մարդ, մի՛ ծուլացիր, քանի որ այս կեանքից յետոյ համարժէքն ես ընդունելու Տիրոջից: Դրա համար է ասում՝ «Այս աշխարհի կերպարանքով մի՛ կերպարանուէք» *(Հռովմ. 12. 2)*, քանզի երկինք ենք նահատակուելու, ուր չկայ փոփոխում, ուր խոստացուած են անեղծ ու անփոփոխելի պարգեւների հատուցումներ, ուրեմն դրան համապատասխան էլ վարք պիտի ունենանք:

Այստե՛ղ նախապէս բարութիւն անենք, ինչու՞ ինքներս մեզ նետենք մրրիկի ու նաւակոծութեան պտոյտի մէջ: Դիմենք դէպի խաղաղ նաւահանգիստը, ուր չկայ հարստութիւն կամ աղքատութիւն, փառք կամ անարգութիւն, չկայ ցաւ կամ առողջութիւն, որը հաստատուն է առաքինի, բարեպէս խրատուած ոգով, ամէն ինչ նրա համար դիւրութեամբ է լինում եւ այստեղից է հանգստեան ճաշակն սկիզբ առնում:

Եւ ինչպէս մի խաղաղ նաւահանգիստ՝ ապահով մնանք եւ բազմապատիկ բարիքներ վայե-

լենք, որոնց մենք ամենքս արժանի թող լինենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի մարդասիրութեամբ, Որին եւ Հօրն ու Սուրբ Հոգուն փառք, իշխանութիւն եւ պատիւ յաւիտեան:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ *ԵՒ* ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ապաշխարութիւնը արծուի բարձունքներն է հանում դժոխքի յատակն ընկած հոգին:

Ապաշխարութեան եւս մէկ ճանապարհ կայ: Եւ ո՞րն է դա,- տրտմել եւ հոգոց հանել մեղքերի համար եւ քաւել յանցանքները:

Քեզանից աւելի ոչինչ չեմ պահանջում, այլ միայն՝ որ սգաս ու տրտմես քո մեղքերի համար եւ հառաչես քո յանցանքների համար: Տե՛ս, չեմ ասում անդունդներ կտրիր ու անցիր կամ ծովերը մտիր, ոչ էլ՝ սարերը ելիր կամ ձորերի վրայով թռիր, երկարաձիգ դաշտերով քայլիր կամ ունեց-

ուածքդ վաճառիր: Այլ՝ միայն սգա՛ մեղքերի համար եւ մեղայ ասա Աստծուն:

Եւ դարձեալ հարցնում ես, որ եթէ տրտմես մեղքերի համար, լուացա՞ծ կը լինես դրանք: Սուրբ Գրքերից ունենք օրինակներ: Կար Աքաաբ անունով մի թագաւոր, որի համար վկայուած էր, թէ արդար է ի սկզբանէ եւ թագաւորեց Իսրայէլում: Բայց նա, որ արդար թագաւոր էր, իր կնոջ՝ Յեզաբէլից դրդուած ագահութեան գիրկն ընկաւ, պահանջեց իսրայէլացի Նաբովթի այգին, ապա եւ սպանեց նրան: Մարդ ուղարկեց նրա մօտ եւ ասաց՝ «Տո՛ւր ինձ քո այգին արծաթի դիմաց կամ եթէ ուզենաս, դրա փոխարէն քեզ ուրիշ այգի կը տամ», իսկ նա ասաց, թէ՝ «Իմ հայրերի ժառանգութիւնը քեզ չեմ տայ»: Աքաաբը չէր կամենում այգին ստիպողոբար խլել, քանի որ հիւանդութեան մէջ ընկաւ, բայց նրան մօտեցաւ իր կինը՝ աղտեղի ու բարուց հեռացած անօրէն Յեզաբէլը: Եւ կինն ասաց. «Ինչու՞ ես տխրել, ինչի՞ց է, որ ոչ ուտում ես, ոչ խմում: Վե՛ր կաց, սթափուի՛ր, եւ ես քեզ կը յանձնեմ իսայէլացի Նաբովթի այգին»: Նա հրովարտակ գրեց Աքաաբի անունով, կնքեց մատանիով եւ հրովարտակն ուղարկեց ծերերին

ու իշխաններին եւ ասաց. «Պահք պահեցէք եւ Նաբովթին ժողովրդի մէջ գլխաւոր տեղում նստեցրէ՛ք, իսկ նրա դիմաց թող նստեն երկու անօրէն մարդիկ, որ վկայութիւն տան նրա մասին ու ասեն, թէ նա հայհոյել է Աստծուն ու արքային»: Ահա՛ պահք, որ արւում է մեծագոյն անօրէնութեամբ: Պահք պահեցին սպանութիւն գործելու նպատակով, եւ Նաբովթին մահուան հասցին սպանելով:

Երբ սպանութեան մասին լսեց Յեզաբէլը, ասաց իր ամուսին Աքաաբին. «Գնա՛, ժառանգի՛ր իսրայէլացի Նաբովթի այգին, քանզի նա մեռել է»: Աքաաբը միառժամանակ տրտմութեան մէջ ընկաւ, բայց յետոյ եկաւ ու ժառանգեց իսրայէլացի Նաբովթի այգին:

Այնժամ Աստուած նրա մօտ ուղարկեց Եղիա մարգարէին՝ ասելով. «Գնա՛ ու ասա՛ Աքաաբին. քանի որ սպանեցիր ու ժառանգեցիր նրա ունեցուածքը, արդար արիւն հեղեցիր, ապա դրա դիմաց քո արիւնը կը թափուի, շներն ու խոզերը կը լափեն արիւնը, եւ բոզերը կը լողանանն նրա մէջ»:

Աստուածային էր բարկութիւնը՝ լի սաստիկ հրամանով, եւ տե՛ս, թէ ու՞ր ուղարկեց Եղիային,-

այն այգին, ուր մեղք էր գործուել եւ հենց այնտեղ էլ պատիժը եղաւ: **Ուր անօրէն գործերն են, այնտեղ էլ պատիժն է**:

Եւ երբ տեսաւ Աքաաբը Եղիային, ասաց. «Ահա գտայ իմ թշնամուն»: Ինչու՞ էր նրան թշնամի անուանում, քանզի Եղիան մշտապէս յանդիմանում էր Աքաաբին: Գիտէր, որ մեղքերի համար մշտապէս յանդիմանում է, բայց այժմ առաւե՛լ չափով պիտի պարսաւի: Եւ Եղիան Աքաաբին ներկայացրեց Տիրոջ պատուհասը, որ պիտի ստանար սպանելու, ժառանգութիւնը խլելու եւ արդար արիւն հեղելու համար: «Դրա նման նաեւ քո արիւնը կը թափուի եւ շները կը լափեն քո արիւնը, եւ պոռնիկները կը լողանան նրա մէջ» *(տե՛ս Գ Թագ. 21. 19):*

Աքաաբին այս ամէնը ասուեց որպէս աստուածային պատիժ: Եւ երբ նա լսեց, խիստ տրտմեց մեղքերի համար, հասկացաւ իր յանցանքները ու զղջաց: Աստուած պատժի չարժանացրեց նրան, այլ նրա առաջ կանգնեցրեց Եղիային, որպէսզի իր խօսքը անտեղի դուրս չգայ եւ Աքաաբը նոյն տանջանքները չկրի, ինչ Յովնան մարգարէն, որին ասել էր Աստուած՝ «Գնա՛, քարոզի՛ր եւ ազ-

դի՛ր Նինուէ մեծ քաղաքի վրայ, ուր բազում մարդիկ են ապրում: Եւ այնտեղ կան տասներկու բիւր մանուկներ, որ աջն ու ձախը դեռ չեն ճանաչում» *(տե՛ս Յովն. 4. 11)*: Եւ այն էր լինելու քարոզը, որ երեք օր յետոյ Նինուէն պիտի կործանուի: Բայց Յովնանը չէր կամենում գնալ՝ իմանալով Աստծոյ մարդասիրութեան մասին: Ասաց՝ «Կը գնամ քարոզելու, բայց չէ՞ որ դու մարդասիրաբար կը զղջաս, եւ ես սուտ մարգարէի նման կը մեռնեմ»:

Փախաւ Յովնանը Տիրոջ երեսից եւ նաւը մտաւ: Բայց նաւը նրան թաքնուել չտուեց, այլ առաւ, պահեց որպէս իր իմաստուն ծառայակից՝ վերստին Նինուէ վերադարձնելու համար: «Ո՞ւր ես փախչում, Յովնա՛ն, օտար երկի՞ր ես արդեօք փախչում, բայց Տիրոջն է երկիրը ամբողջովին, այդ ո՞ր ծովով պէտք է գնաս, քանզի Նրանն է ծովը եւ Նա է ստեղծել այն: Իսկ եթէ երկինք՝ ապա չե՞ս լսել Դաւիթից, որ ասում է՝ «Եթէ երկինք ելնեմ, Դու այնտեղ ես»:

Բայց Յովնանը երկիւղից էր փախուստի դիմում: Կարծում էր, թէ կը կարողանայ փախչել, բայց չէ՞ որ Աստծուց փախչել անհնար է: Եւ երբ

ծովը նրան հանեց ու նետեց Նինուէ, նոր միայն սկսեց քարոզել եւ ասել. «Ահա երեք օր՝ եւ Նինուէն կը կործանուի»: Դրանով պէտք է հասկանաս, որ փախուստ էր տալիս իր սրտում ունեցած այն յոյսով, թէ՝ Աստուած մարդասէր է, կը զղջայ մարդկանց գործած չարիքների համար:

Նինուէում քարոզելուց յետոյ Յովնանը դուրս ելաւ քաղաքից, եւ նայում ու սպասում էր, թէ ի՞նչ է կատարուելու: Երբ տեսաւ, որ երեք օր անց պատուհասը վրայ չի հասել քաղաքին, այն ժամանակ ինքը մտքերի մէջ ընկաւ ու ասաց՝ «Արդեօ՞ք ճիշտ չէի մտածում, թէ Աստուած քաղցր է ու գթասիրտ, ողորմած է, անյիշաչար, անոխակալ ու համբերատար եւ ներում է մարդկանց չարիքները»:

Եւ որպէսզի նոյն մտածումները չպատեն Եղիային, ինչ որ Յովնանի դէպքում է, ասաց նրան Աստուած, թէ ինչու ներեց Աքաաբին: Ահա թէ ինչ ասաց Աստուած Եղիային. «Տեսա՞ր, թէ ինչպէս սգով ու տրտմութեամբ իմ առաջ կանգնեց Աքաաբը: Արդ՝ նրա չարութեանը համարժէք չեմ հատուցի»:

Տէրն իր ծառային աջակից է լինում: «Մի՛ կարծիր, թէ հենց այնպէս ներեցի նրան, ասում է Տէրը, այլ քանի որ փոխուեց, զղջաց եւ անցկացրեց իմ բարկութիւնը: Մի՛ կարծիր, թէ անտեղի ներեցի նրան, քանզի դու ինքդ ճշմարտութեամբ ասացիր, որ եթէ իր վարքը փոխած չլինէր, կրելու էր պատիժն ու պատուհասը: Բայց նա փոխեց իր վարքը, եւ ես բարկութիւնս անցկացրի»: Նաեւ ասում է. «Տեսա՞ր, թէ ինչպէս գնաց Աքաաբն իմ առաջից՝ սուգով ու տրտմութեամբ, Ես իմ բարկութեամբ չվարուեցի նրա հետ»:

Տեսնու՞մ ես ուրեմն, թէ ինչպէս տրտմութեան միջոցով կարելի է մեղքը քաւել, քանզի ունենք ողորմած ու մարդասէր Փրկչին, որ կամենում է, որպէսզի բոլոր մարդիկ փրկուեն եւ ճշմարիտ գիտութեանը դառնան: Ահա վերցնենք անիրաւ դատաւորի օրինակը, որի մօտ այրի կնոջ պաղատանքը մարդասէր գութի վերածուեց *(տե՛ս Ղուկ. 18. 2-8)*: Օրինակ վերցնենք բարեկամի առակը, որ թէեւ ժլատութեամբ, բայց երեք հաց փոխ տուեց *(Ղուկ. 11. 5)*: Հին ու նոր մեղքերի ու ապաշխարութեան մասին բազմաթիւ այլ օրինակներ նոյնպէս ունենք: Եւ դրանք ուղղակիօրէն քարոզում են

Աստծոյ անսահման մարդասիրութիւնն ու անբաւ գթութիւնը, նաեւ՝ թէ ինչպէ՛ս է մեզ խօսքով ու գործով ապաշխարութեան կոչում. խօսքով՝ երբ ասում է. «Ոչ թէ մեղաւորի մահը, այլ նրա դարձը չար ճանապարհից եւ փրկուելն եմ կամենում» *(հմմտ. Յովհ. 12. 47)*, նաեւ թէ՝ «Եկէ՛ք ինձ մօտ, բոլոր յոգնածներդ ու բեռնաւորուածներդ, եւ ես ձեզ կը հանգստացնեմ» (*Մատթ. 11. 27):* Եւ գործերով՝ երբ Ենովքի ապաշխարութեամբ դարձի գալը պատուեց, երբ ընդունեց ապաշխարող Դաւթին, երբ Մանասէի մեղքերին թողութիւն տուեց, երբ Աքաաբի տրտմութիւնը ապաշխարութիւն համարեց, երբ մաքսաւորին արդարացրեց, երբ պոռնիկին ընդունեց, երբ աւազակին դրախտ տարաւ, երբ Պետրոսի ուրացութիւնը դառն արտասուքից յետոյ անտեսեց եւ երեք խոստովանութեամբ ուրացութեան վէրքերը բժշկեց:

Ուրեմն, այս ամէնի մասին իմանալով՝ չուրանանք մեր կենդանի կոչումից եւ մոռացութեան չտա՛նք մեր յանցանքները խոստովանելը: Յիշենք, թէ ինչքա՛ն էինք պարտական, բայց մեր լուսատեսակ բնութիւնը սեւ ներկով պատելով ինչպիսի՛ մեղքերի տակ ընկանք, հայրենի ունեց-

ուածքը անառակութեամբ վատնելով ինչպիսի՛ վերջին աղքատութեան մէջ ընկանք ու չքաւոր խոզաբածի պէս սովալլուկ եղանք: Մինչդեռ բարերար հայրը չգարշեց եւ մեր մեղքերի չարահոտութեան մէջ չթողեց մեզ, այլ անառակի վերադարձը մեզ որպէս օրինակ տալով՝ գրկեց ու համբուրեց եւ իր նախկին պատմուճանը յագցրեց: Եւ մանաւանդ՝ մատանիով զարդարեց եւ կոշիկներ տուեց, մորթեց պարարտ եզը եւ մասնակից դարձրեց երկնային ուրախութեանը, ինչպէս որ դրամը ու կորուսեալ ոչխարը գտնելու դէպքում էր: Եւ մեզ արժանի դարձրեց Իր սեղանին, անարժաններիս սրբեց ու մաքրեց ու փառաւորեց:

Իսկ մենք դարձեալ ուրանում ենք այդ պարգեւները, մոռանում ենք մեր գործած յանցանքները սրբելը: Եւ ո՞վ կ’ազատի մեզ այդ տանջանքներից կամ ո՞վ մեզ արժանի կանի ողորմութեան, երբ շնորհների յանդէպ ապաշնորհ եղանք, երախտաւորի յանդէպ՝ ապերախտ, բարերարի յանդէպ՝ տմարդի եւ տուողի յանդէպ՝ անշնորհակալ, եւ վերստին մարմնական հեշտութիւններին դարձանք: Իսկ աղօթքների ու ճգնութեան փոխարէն մեր ժամանակը յատկացրինք

անտեղի ու ցած զբաղմունքների եւ յօժար չեղանք ապաշխարելու, որպէսզի կարողանանք մեր հոգիները շահել եւ դատաւորի հետ հաշտ ու սիրով մնալ:

Եւ արդ՝ չյապաղե՛նք խոստովանել մեր մեղքերը, սկսենք ապաշխարել, քանզի **ապաշխարութիւնը կանգնեցնում է ընկած հոգին եւ արժանի դարձնում մերձենալու Աստծուն**:

Ապաշխարութիւնը լուանում է հոգու աղտեղի մեղքերը եւ ձիւնից է՛լ աւելի ճերմակափայլ դարձնում:

Ապաշխարութիւնը մեռեալ հոգին յարուցում է մեղքերից եւ մշտնջենաւոր անմահութիւն պարգեւում:

Ապաշխարութիւնը արծուի սլացքի պէս բարձունքներն է հանում դժոխքի յատակն ընկած հոգին եւ արժանի դարձնում Աստծոյ արքայութեանը:

Ապաշխարութիւնը կորզում է մարդուն սատանայից եւ ընծայում Աստծուն:

Ապաշխարութիւնը բացում է երկնքի դռները եւ մեղքերի պատճառով տարագրուածներին արքայութիւն մտցնում:

Ապաշխարութիւնը մարդուն յարդարում է որպէս հրեշտակ եւ համապատիւ ու դասակից է դարձնում երկնաւոր էակներին:

Եւ ուրեմն՝ ողջ սրտով եւ ուղիղ մտքով արուած խոստովանութիւնն ու ապաշխարանքը մխիթարում է մեղքերից սգաւոր դարձած հոգին եւ յուսահատ մտքերում հաստատում է Աստծոյ ողորմութեան յոյսը:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ, ՊԱՀՔԻ ԵՒ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Խոստովանութիւնն ու պահքը, ողորմութիւնն ու աղօթքը հոգին զարդարում են եւ արեգակի նման փայլատակում:

Մեր Տէր Յիսուս Քրիստոս մեզ ուսուցանում է, որ առանց եղբայրասիրութեան, առանց աղքատասիրութեան եւ ողորմութեան անհնար է հաղորդակից լինել Աստծոյ սիրուն կամ Նրա ողորմածութեանն արժանանալ, քանզի Նա ամենայն ինչ սիրով սրբում է, եւ մեղքն անգամ սիրով մաքրում է: Բայց պէտք է այս իմանալ, որ անողորմ

դատաստան է պատրաստուած նրա համար, ով ողորմութիւն չի անում, քանզի անողորմ մնալով սրբութիւնն է պղծում: Եթէ դրան չես հաւատում՝ յիմար կոյսերի օրինակը ցոյց կը տամ, որ ամէն բարիքներ ստացան եւ միայն ողորմութիւնն անտեսեցին:

Ուրեմն, մարմինը, որ գլուխ չունի, ինչպէ՞ս կարող է կենդանի մնալ. այդպէս ամէն արդարութիւն մարմինն է, իսկ ողորմութիւնը՝ գլուխը: Երբ որ գլուխը, որ սէրն է եւ զարդը կեանքի, հատեն՝ հատած կը լինեն իրենց կեանքի յոյսը կենդանութիւն տուողից:

Պահքն ու աղօթքը եւ ողորմութիւնն ու խոստովանութիւնը լուանում են մեղքերի աղտեղութիւնը եւ ճերմակացնում են ձիւնի նման:

Պահքն ու աղօթքը եւ ողորմութիւնը խոստովանութեան միջոցով հաշտեցնում են Աստծոյ հետ, մեղուցեալ հոգին քաւում են, սրբում ու նորոգում, խաւարած ոգիների համար մեծ լոյս ծագեցում:

Պահքն ու աղօթքը եւ ողորմութիւնը խոստովանութեամբ բժշկում են հոգու անտանելի ցաւերը եւ մարդկանց հրեշտակների նմանեցնում:

Պահքն ու աղօթքը եւ ողորմութիւնը խոստովանութեամբ մարդկանց հրեշտակ են դարձնում եւ Աստծուն հաղորդակից դարձնում:

Պահքն ու աղօթքը եւ ողորմութիւնը հալածում են դեւերի բանակներն ու փախուստի մատնում, որի համար Փրկիչը հրամայում է՝ «Այս տեսակ դեւը այլ կերպ դուրս չի ելնում, եթէ ոչ աղօթքով ու ծոմապահութեամբ» *(Մատթ. 17. 20):*

Պահքն ու աղօթքը եւ ողորմութիւնը խոստովանութեամբ փրկում են մեղքերից, մահաբեր թոյները սանձում, հուրը հանգցնում, անիրաւ բռնութիւնը խորտակում, գերեալներին վերադարձնում, բանտերը քանդում եւ բանտարկուածներին ազատում:

Խոստովանութիւնն ու պահքը եւ ողորմութիւնն ու աղօթքը հոգին զարդարում են եւ արեգակի նման փայլատակում:

Պահքն ու աղօթքը եւ ողորմութիւնն ու խոստովանութիւնը յաղթական զէնք են ընդդէմ բանսարկուի, որով Յիսուսը խորտակեց ու նրա տկարութիւնը ցոյց տուեց:

Արդ, եկէք մենք՝ Քրիստոսի հաւատացեալ ծառաներս, խոստովանութեամբ եւ շահաւէտ

պահքով ճգնենք ու ակնկալենք Քրիստոսին, որ պահքի նաւագլխին նստած ամենայն կերպ դէպի իրեն է կանչում՝ պահքի եօթը շաբաթեայ շրջաններով նաւարկելու, պահքի ծովից յետոյ նաւահանգստին հասնելու համար:

Կանգնեցնե՛նք մեր հոգու առագաստը եւ հաւատքի քաղցրաշունչ հողմի ղեկով ու աղօթքներով առաջ շարժուենք: Սատանայական հողմերի տակ չընկնենք, որով պատրաստում է մեզ ընկղմել ու պահքի օրերից շեղել, մեծ շահաւէտութիւնից անդարձ զրկել ու ամօթով թողնել: Քանզի ամենքը, որ խոտորւում են պահքից, չեն արժանանայ այն կանչին, երբ ասում է՝ «Եկէ՛ք ինձ մօտ, բոլոր յոգնածներդ ու բեռնաւորուածներդ, եւ ես ձեզ կը հանգստացնեմ» *(Մատթ. 11. 28):*

Ահա պահքի օրերն են, ոչ ոք ծոյլ թող չլինի:

Ահա վաստակի օրերն են, ոչ ոք անշահ թող չմնայ:

Ահա հրեշտակների հետ օրհնութիւն տալու օրերն են, ոչ ոք սատանայի քնով թող չծուլանայ:

Ահա Աստծուն տեսնելու օրերն են, ոչ ոք զրկուած թող չլինի:

Ահա լոյսի օրերը, ոչ ոք խաւարում թող չմնայ:

Ահա յաւիտենական կեանքը վաստակելու օրերը, ոչ ոք սովեալ մուրացկանի նման ու տառապեալ թող չմնայ:

Ահա բաշխելու օրերը, երբ Քրիստոս բաշխում է իւրաքանչիւրին ըստ իր արժանիքի, ոչ ոք թող անտեսուած ու թաքնուած չլինի:

Ահա փրկութեան օրերը, եւ Քրիստոս Իր Սուրբ արիւնը հեղում է որպէս ազատութեան յոյս ողջ տիեզերքի փրկութեան եւ թողութեան համար:

Ո՛վ աստուածասէր ու պահքի նախանձախնդիր մարդիկ, լսէ՛ք, որ այսօր Աստծոյ Որդին իջնում է իր բոլոր հաւատացեալների մօտ ըստ խօսքի, որ ասում է՝ «Ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած լինեն իմ անունով, այնտեղ ես եմ, նրանց մէջ» *(Մատթ. 11. 29):*

Ուրեմն եկէ՛ք, բոլոր հաւատացեալներ, ինչպէս Դաւիթն է ասում՝ «Մտէ՛ք նրա դռնից ներս խոստովանութեամբ եւ մտէ՛ք նրա սրահները օրհնութեամբ. գոհութի՛ւն մատուցեցէք Տիրոջն ու օրհնեցէ՛ք անունը Նրա» *(Սաղմ. 99. 4)*: Եւ դարձեալ՝ «Գոհութի՛ւն մատուցէք Տիրոջը, քանզի բա-

րի է Նա, քանզի յաւերժ է ողորմութիւնը Նրա» *(Սաղմ. 117. 1):*

Պէտք է խոստովանել պահքի թէ՛ սկզբում, թէ՛ վերջում:

Խոստովանութիւնը հեռացումն է սատանայից եւ միաբանելը Աստծոյ հետ:

Խոստովանութիւնը մեղքը վատաբանելն ու իրենից հեռու վանելն է:

Խոստովանութիւնը վերահաստատում է յոյսը, գարշեցնում ու ատելի դարձնում մեղքը:

Խոստովանութիւնը խոնարհ է դարձնում մեղաւորին եւ զօրացնում Սուրբ Հոգով:

Խոստովանութիւնը պարիսպ է մեղաւորների համար, պահպանում է նրանց սատանայի բոլոր հնարագործութիւններից:

Խոստովանութիւնը մեղաւորների համար նաւահանգիստ է, հանդարտութիւն՝ ալեկոծեալ խորհուրդներից, այն Աստծոյ առաջ մտնելու դուռ է, որ կողպւում ու ամուր փակւում է բանսարկուի առաջ:

Խոստովանութիւնը բժշկում է մեղքով հիւանդացածներին եւ առաջնորդում է դէպի երկնային արքայութիւն:

Խոստովանութիւնը մարմնաւոր բեռներից ձերբազատում է եւ հոգին թեթեւացնում:

Խոստովանութիւնը պարսաւելն է մեղքերի, իսկ ծուլանալիս ինքը՝ մեղքն է դատաստանի օրը պարսաւելու եւ կորստեան մատնելու քեզ:

Խոստովանութիւնը մեղքով յղացաների ծնելու նման է, քանզի ինչպէս յղիներն առանց ծնելու չեն ազատւում, այնպէս էլ մեղաւորները առանց խոստովանութեան ազատուել չեն կարող:

Խոստովանութիւնը սրբագործ լուացման աւազան է, նրանով փկրւում եւ Աստծոյ համար կրկին բնակարան են լինում:

Խոստովանութիւնը քաւիչ հուր է մեղքերից, ինչպէս ասում է Տէրը՝ «Երկրի վրայ կրակ գցելու եկայ» *(Ղուկ. 12. 49)* եւ կամենում եմ, որ այժմ բորբոքուի:

Խոստովանութիւնը հուր է եւ ջուր, քանզի Քրիստոս աշխարհը լուսաւորեց հրով եւ ջրով:

Խոստովանութիւնը հուր է ըստ վարդապետութեան, եւ ջուր ըստ մկրտութեան, քանզի այդ երկուսի միջոցով փրկութիւն ստացաւ Ադամի մարդկային ցեղը:

Խոստովանութիւնը խոնարհութեան փառքն է, քանզի խոստովանելիս խոնարհւում են մեղաւորները, խոնարհուելիս՝ արտասւում, իսկ արտասուքը քաւում է մեղքերը, հոգին սրբում ու անէացնում, մարմինը լուսաւորում:

Խոստովանութիւնը նման է սուրբերից մէկի պատմածին. մեղաւոր մի մարդ գալիս է նրա մօտ խոստովանելու եւ տեսնում է, որ կրակէ մեխեր կան խրուած այդ մեղաւորի վրայ, դրանք խոստովանութեան պահին սկսում են մէկ-մէկ դուրս գալ ու մարել:

Խոստովանութիւնը գանգատ է առ Աստուած, թէ՝ խաբեց ինձ թշնամին, եւ ինչպէս որ որդին հօր առաջ ընկնում ու արտասուքը հոսում է նրա յուզառատ դէմքից, այնպէս էլ մեղաւորի տրտմութիւնը խոնարհեցնում է Աստծոյ մարդասիրութիւնը Աստծուց հեռացածների համար:

Խոստովանութիւնը այն է, երբ Դաւիթը մեկնելով ասում է՝ «Ասացի, թէ կը խոստովանեմ մեղքերն իմ, եւ դու թողութիւն կը տաս իմ մեղքերի ամբողջ ամբարշտութեանը» *(Սաղմ. 31. 5)*:

Նոյն կերպ Եսային է մեկնում ասելով՝ «Նախ դու խոստովանի՛ր քո անօրէնութիւնները, որ արդարացուես» *(Եսայի 43. 26)*:

Խոստովանութիւնը այն է, ինչպէս Դաւիթն է ասում՝ «Ես գոհութիւն պիտի մատուցեմ քեզ, Տէ՛ր, ուղիղ սրտով, սովորելով քո արդար դատաստանները» *(Սաղմ. 118. 7)*: Նաեւ ասում է՝ «Օրհնեցէ՛ք Տիրոջը գոհաբանութեամբ, սաղմո՛ս երգեցէք նրան օրհնութեամբ» *(Սաղմ. 146. 7)*:

Խոստովանութիւնը յոյս է հաւատացեալների համար, ազատումն է մեղքերի տիղմից, որի մասին Դաւիթն ասում է՝ «Նա ինձ հանեց տառապանքի փոսից, ցեխից ու տիղմից. ոտքերս ժայռի վրայ հաստատեց եւ ուղղեց իմ քայլերը» *(Սաղմ. 39. 3)*:

Խոստովանութիւնը այն է, կրկին, ինչպէս Դաւիթն է ասում՝ «Ես գոհութիւն պիտի մատուցեմ քեզ, Տէ՛ր, ուղիղ սրտով, սովորելով քո արդար դատաստանները» *(Սաղմ. 118. 7)*:

Խոստովանութիւնը քրիստոնեաների պարծանքն է, երբ յօժար սրտով արդարութիւն է յղանում եւ փրկութիւն ծննդաբերում: Դրա համար է ասւում՝ «Սրտիս նեղութիւնները խիստ շատա-

ցան, եւ ազատեց ինձ Տէրը իմ վշտերից» *(Սաղմ. 24. 17)*:

Խոստովանութիւնն այն է, երբ որ զղջումո՛վ են խոստովանում, ինչպէս մարգարէն է ասում՝ իր երկիւղածների կամքը կատարում է Տէրը, նրանց աղօթքները լսում է եւ փրկութեան տանում»: Իսկ խոստովանութեան համար մարգարէն քաջալերում է հաւատացեալներին՝ «Ձեր յոյսը դրէ՛ք նրա վրայ, ժողովուրդների ո՛ղջ բազմութիւններ, բացէ՛ք նրա առջեւ սրտերը ձեր, քանզի Աստուած մեր օգնականն է յաւիտեանս յաւիտենից» *(Սաղմ. 61. 9)*:

Խոստովանութիւնը մի մեծ ապաւէն է մեղաւորների համար, օրինակ երբ Դաւիթը մեղանչեց, սատանան անյուսութիւն բերեց նրա վրայ, որ եւ ինքն ասում էր՝ «Ամէն օր ինձ ասում էին. «Քո Աստուածն ո՞ւր է» *(Սաղմ. 41. 4)*: Բայց Դաւիթը մարտնչում էր ինքն իր դէմ ու ասում՝ «Ինչո՞ւ ես տրտմում, հոգի՛ իմ», կամ՝ «Ինչո՞ւ ես խռովեցնում ինձ. յոյսդ դի՛ր Աստծոյ վրայ, օրհներգի՛ր նրան, իմ երեսը փրկողն Աստուած է» *(Սաղմ. 41. 6)*: Ինչու՞ է այստեղ «երեսը փրկող» ասում եւ ոչ թէ

«մարմինը», քանի որ Աստծոյ նմանութիւնն է ակնարկում, որով Աստուած պատուեց մարդուն:

Խոստովանութիւնը Աւետարանից տրուած վկայութիւն է, Բանն Աստծոյ ձայնը, որ անապատում լսեց Յովհաննէս Մկրտիչը՝ Աստծոյ սուրբ հրեշտակը, Զաքարիայի ու Եղիսաբէթի որդի մարգարէն, իր հոգեւոր ծնողի՝ զօրեղ Եղիա մարգարէի որդին, որին հրաման եղաւ քարոզելու մկրտութեան, մեղքերի թողութեան, ապաշխարութեան համար: Յովհաննէսը նաեւ խոստովանութեան պատգամ ստացաւ, ինչպէս ասում է Ղուկասը, թէ՝ «Գալիս եւ խոստովանում էին նրան Յորդանան գետում», եւ նա խոստովանութեամբ բացում էր նրանց համար ապաշխարութեան դռները:

Խոստովանութեան ու ապաշխարութեան առաջ չկայ որեւէ փականք՝ կանխելու Աստծոյ ողորմութիւնն ու բարերարութիւնը որեւէ մէկի համար: Դրա մասին մարգարէն ասում է՝ «Խոստովանէ՛ք Տիրոջը, քանզի քաղցր է Նա, քանզի յաւերժ է Նրա ողորմութիւնը» *(Սաղմ. 105. 1)*:

Խոստովանութիւնը քահանաների պարծանքն է, համաձայն առաքեալի ասածի, թէ՝ «Խոստովա-

նէ՛ք միմեանց ձեր մեղքերը», ու նաեւ՝ «Երբ բժիշկը հիւանդանում է, այլ բժիշկ է նրա համար պէտք» *(Ղուկ. 4. 23)*: Բայց եթէ քինախնդիր կամ ընկերոջը նախանձող մէկը մտնի եկեղեցի, Աստծոյ Սուրբ սեղանի առաջ երեսն ի վար խոնարհուի, արտասուալից խոստովանի եւ թողութիւն խնդրի՝ Տէրը կը տայ առատապէս եւ չի նախատի: Բայց սա ոչ թէ կարգ թող լինի, այլ այն դէպքերի համար, երբ մերձակայ քահանայ չկայ:

Խոստովանութիւնը զարդ է եպիսկոպոսների համար, երբ միմեանցից վկայութիւն են ստանում սիրով:

Խոստովանութիւնը փառք է հայրապետների համար՝ կանգնելու Աստծոյ առաջ եւ հաճոյ լինելու եղբայրներին: Եւ քանի որ հայրապետութիւնը երկնաւոր Հօր օրինակն է, թէ ինչպէս պէտք է լինել համբերատար ու եղբայրասէր, քաղցր, բարեսէր եւ սուրբ, ուրեմն դրանցից շեղուելու դէպքում հայրապետը պատգամից հեռացած կը լինի:

Խոստովանութիւնը կոյսերի գովութիւն է, քանզի կուսութեան խոստովանութիւնն էլ զարդ է, որ իսկոյն ջնջում ու մաքրում է մեղքերի բոլոր

յանցանքները եւ հարսնազգեստ փառքով Աստծուն ընծայում:

Խոստովանութիւնը մեղաւորների համար ապաշխարութեան զարդ է, իսկ անմեղների համար՝ գովութեան պարծանք եւ հոգու զարդ:

Խոստովանութիւնը մեղքով տկարացած կանանց ամրութիւն է բերում, տղամարդկանց՝ վստահութիւն նրանց յանդէպ:

Խոստովանութիւնը սուրբ հայրերի հաստատուն լինելն է, իսկ մեղաւորների՝ ապաշխարութեան յոյսը, ըստ այս խօսքի՝ «Ասա՛ նախ դու քո անօրէնութիւնները, որպէսզի արդարացուես» *(Գաղատ. 2. 10)*: Այդ մասին վկայում է Սողոմոնն ասելով՝ «Արդարն ինքն իր մասին չարախօսում է իր խօսքի սկզբին» *(Առակ. 18. 17)*: Եւ մեր Տէրը յստակ արտաբերեց, ասելով՝ «Երբ կատարէք այն բոլորը, որ ձեզ հրամայուած է, ասացէք, թէ՝ «Անպիտան ծառաներ ենք. ինչ որ պարտաւոր էինք անել, ա՛յն միայն արեցինք» (*Ղուկ. 17. 10)*:

Խոստովանութիւնը խոնարհութիւն է Աստծոյ առաջ ըստ Նրա անսուտ պատուիրանի՝ «Ով խոնարհեցնում է իր ան-

ձը՝ կբարձրացուի, եւ ով բարձրացնում է իր անձը՝ կխոնարհուի» (Մատթ. 23. 13):

Խոստովանութիւնը նման է պարտքի վճարմանը եւ պարտապանների հոգսից ազատուելուն:

Խոստովանութիւնը մեղքերից հրաժարուելու եւ արադարութեամբ շարժուելու դաշինք է:

Խոստովանութիւնը հեռացումն է սատանայական խստութիւններից եւ Աստծոյ մօտ ի մի գալը՝ Նրա քաղցրութեամբ:

Խոստովանութիւնը դեղամիջոց է սատանայի մահուան դեղի դէմ, քանզի մահուան դեղն էլ մէկ այլ դեղով են բուժում:

Խոստովանութիւնը քրիստոնէական ուխտի դրոշմ է, ըստ որի՝ եթէ խոստովանութիւնից հեռանան, ապա կապուած մեղքերից չեն կարող ազատուեալ:

Խոստովանի՛ր մեղքերդ, եւ կ՚արդարացուես:

Խոստովանի՛ր եւ եղի՛ր «իրաւացի քո ոսոխի դէմ», քանզի մինչ նրա հետ ճանապարհին լինես, գուցէ քեզ դատաւորին յանձնի, դատաւորը՝ դահճին, ու դու բանտ նետուես: «Ոսոխն» այս դէպ-

քում սատանան է, իսկ «ճանապարհը»՝ մեր այս մարմնաւոր կեանքը:

Խոստովանի՛ր եւ տու՛ր հաշիւը մեղքերից, տանջանքներից ու թշնամու չարիքից ազատուելու համար:

Խոստովանի՛ր դատաւորի յանդիման կանգնելուց առաջ, քանզի անաչառ դատաւորը անողորմ դատ է անելու քեզ ահեղ դատաստանում, ուր որեւէ մէկը չի կարող փրկել կամ բարեկամաբար կարեկցել. ոչ ազգականը ազգականին կամ եղբայրը եղբօրը կարող է օգնել, ոչ անգամ հայրը որդուն կարող է փրկել, եղբայրը եղբօրը չի կարող ողորմել, ոչ էլ մայրը դստերը կարող է ազատել, այլ ամենքի աչքերը միայն Աստծուն ուղղուած կը լինեն, թէ ու՞մ կը ողորմայ կամ ու՞մ քաղցր աչքով կը նայի:

> Երանի՛ նրանց, ում Աստուած կը ողորմայ, քանզի թէկուզ աշխարհիկ մի թագաւոր, երբ որ քաղցրութեամբ նայում է մեզ, ուրախանում եւ խնդում ենք, ուրեմն արքա՛ն առաւել կը ցնծանք ու կը զուարճանանք պարելով, երբ տէրե-

րի Տէրը եւ թագաւորների Թագաւորը գթալով մեզ նայի, երբ ապաշխարողները պարտքը վճարածի նման անպարտք լինեն:

Ուրեմն՝ չծուլանանք աղօթքներից, կանգ չառնենք արտասուք թափելուց, չդադարենք ողորմութիւն տալուց:

Ծարաւողին յագեցնենք ջրով, քաղցած մնանք, բայց քաղցածին հաց տանք, մերկ ու ցրտահար մարդկանց զգեստաւորող լինենք, անտուններին կացարան յատկացնենք, հիւրերին ու օտարականներին մեզ մօտ ընդունենք Իր՝ Քրիստոսի նման, տուրքերը վճարենք եւ քաղցրութեամբ խօսենք աղքատների ու տնանկների հետ, որպէսզի մեզ նոյնպէս քաղցրութեամբ նայի Տէրը, որպէսզի փրկի յաւիտենական հրից: Եւ ուրեմն Քրիստոս թող մեզ արժանի անի՝ մեր կեանքի ողջ ընթացքում խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ ապրելու Քրիստոսի շնորհներով, Որին փա՛ռք յաւիտեանս. ամէն:

ՊԱՀՔԻ ԵՒ ԱՂՕԹՔԻ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Պահքը անուշ խոնարհութիւն է բերում:

Խոստովանութեան եւ զղջման համար կարիք ունենք նախ արտասուքի եւ աղօթքի, երկրորդ՝ պահքի, երրորդ՝ սովորութիւնների եւ ապա բարի գործերի, նաեւ խոնարհութեան, որ բոլոր առաքինութիւնների լրումն է:

Որպէսզի մարդը Աստծոյ մարդ լինի, նախ պէտք է արտասուքով եւ խոստովանութեամբ ու տքնութեամբ մեղքերի ձմեռային սառնամանիքները մեղմի եւ հպարտութիւնը մի կողմ նետի: Դրա համար պահքը ճնշում է մարմինը եւ այն անհաղորդ է պահում մեղքերի հանդէպ, աղտեղութիւնները հանում եւ մի կողմ է գցում, եւ

մարմինը սրբութիւն է ստանում, դառնում է Աստծոյ բնակարան, հոգին կազմւում է մաքուր խորհուրդներով եւ համարձակութիւն ստանում Աստծոյ առաջ:

Սա ընդունելու համար ողորմութիւն է անհրաժեշտ, քանզի ով ողորմութիւն է տալիս աղքատին՝ փոխ է տալիս Աստծուն եւ տուածի փոխարէն Տիրոջից ընդունում է գութ եւ ողորմութիւն, հոգին ամրութիւն է ստանում Աստծոյ առաջ: Եւ եթէ մէկը կարողանայ ինքն իրեն այսպէս առողջացնել եւ արժանաւոր դառնալ, ապա մերձեցած կը լինի անճառելի խորհրդին, որը ողջացնում է հոգու եւ մարմնի վէրքերի սպին, ջնջում է մեղքերի յիշատակը եւ ընդունում է վերստին որդեգրութիւնը, ինչպէս գթասիրտ հայրը՝ անառակ որդուն:

Արդ՝ մենք չպէտք է անտարբեր լինենք այն ճանապարհը մտնելիս, որ յաւիտենական կեանք է տանում՝ մեղքերը ապաշխարութեամբ քաւելու եւ արդարանալու, անսահմանին ժառանգորդ լինելու համար:

Մեծ ուժ ունի աղօթքն առ Աստուած, նրա միջոցով Աստծոյ Հոգին իջնում է մարդու վրայ, եւ

նա Հոգով խօսում է Աստծոյ հետ, եւ ինչ էլ որ չգիտի խնդրել Աստծուց՝ Սուրբ Հոգին օգնութեան է հասնում մեր տկարութիւններին: Այս բաղձանքով Դաւիթը օրական եօթն անգամ օրհնում էր Աստծուն իր ողջ կեանքում՝ առաւօտեան, երրորդ ժամին, երեկոյեան, քնի ժամին, գիշերուայ մէջ: Եւ նոյնիսկ երբ բազմահոգ թագաւոր էր, անխափան պահպանում էր այս կարգը:

Արդ՝ ամէն ոք պարտաւոր է մշտապէս կրկնել սա վաղ առաւօտեան՝ աղօթքներով գոհութիւն մատուցելով Աստծուն, որպէսզի պաշտպանուենք ու զերծ լինենք գիշերային ցնորքներից ու սատանայական մարտերից:

Ցերեկուայ աղօթքով՝ որպէսզի ողջ օրուայ համար խնդրենք զգուշաւորութիւն վարքի, գործերի համար, Տիրոջ սուրբ պատուիրանների գիտութեամբ լուսաւորուելու համար:

Երրորդ ժամի աղօթքով՝ որպէսզի արժանի լինենք Սուրբ Հոգու շնորհներին, որպէսզի Տիրոջից խնդրենք կեանքում Նրանով առաջնորդուելու հնարաւորութիւն եւ չսխալուենք ու Քրիստոսի հետ խաչը ելնենք հանդիսաւորապէս:

Վեցերորդ ժամին՝ որպէսզի արիանանք աղօթքով եւ վաստակով ընդդէմ կէսօրուայ դիւային գնդերի եւ ամրապէս յաղթող լինենք ընդդէմ ձանձրութեան եւ մեղկութիւնը հեռու վանենք եւ ժուժկալութիւն ստանանք:

Իններորդ ժամին՝ որպէսզի աղօթքով Տիրոջ մահը եւ Նրա Խաչի չարչարանքները պատմենք, հեղած սուրբ արեան միջոցով հայցենք մեղքերի թողութիւն, որպէսզի արժանաւոր լինենք նրա արքայութեանը:

Եւ երեկոյեան ժամին աղօթք մատուցենք՝ որպէս ընդունելի խունկ եւ բարի գործեր՝ ընծայուած Արարչին, եւ մտքից չհանենք մեր Փրկչին, որ ազատութիւն բերեց մեզ:

Իսկ քնի ժամին հասնելիս ամենասուրբ Խաչի պահպանութիւնը հայցենք Տիրոջից, որ հրեշտակային բանակները շուրջականի պատեն մեզ, որպէսզի հակառակորդի խարդախութիւններից փրկուենք ըստ այն խօսքի, թէ՝ «Ես ննջեցի ու քուն մտայ. զարթնեցի, եւ Տէրն իմ ապաւէնն է» *(Սաղմ. 3. 6)*:

Իսկ գիշերը արթնութեամբ աղօթք անենք եւ խոստովանենք Տիրոջը սաղմոսներով, օրհնութեամբ եւ հոգեւոր երգերով՝ Նրա արդարութեան

եւ իրաւունքի համար: Որպէսզի ամենայն ժամ բարձունքներից զգալի լինի Արարչի ազդեցութիւնը իր արարածների հանդէպ՝ արթուն պահելու բոլորին ամենասուրբ անունը փառաբանելու համար, առաւելեւս՝ մարդկանց հանդէպ, որպէսզի հոգեւոր օրհնութիւններ վեր առաքելով արժանի դառնանք երկնային անմարմին հրեղէններին:

Ուստի պէտք է ամենայն ժամ աղօթք անել արտասուքով եւ ահով, որովհետեւ նման դէպքում միտքը պարուրւում է ողջամտութեամբ, արտասուքով ու ահով, սիրտը լուացւում է խղճմտանքից՝ բարձունքները ելնելու եւ բոլոր չար բաներից հեռանալու համար: Այդ ժամանակ ինչ որ հայցես, ըստ դրա էլ կը ստանաս կենդանիների եւ մեռեալների եւ քո մեղքերի թողութեան համար: Քանզի շատ զօրեղ են աղօթքները, երբ արւում են արտասուքով եւ ահով՝ միախառնուած խոնարհութեանն ու փափագներին: Արդ՝ **այնպէս աղօթք անենք, որ շահենք դրա պտուղները եւ հասնենք հանդերձեալ բարիքներին ի մեր Տէր Յիսուս Քրիստոս**:

Պահքը ե՛ւ ժուժկալութիւն է, ե՛ւ սրբութիւն, ե՛ւ հրեշտակային վարք, քանզի նրանից են մարդիկ

սովորում այս ամէնը եւ պատերազմում բնական ու անբնական ախտերի դէմ: Իսկ եթէ պահք պահենք ոչ միայն ուտելով, այլ նաեւ բոլոր գործերով, պահպանուած կը լինի մեր ոտքը չար ճանապարհից եւ ձեռքը՝ չար գործերից, պահպանուած կը լինի միտքը չար խորհուրդներից եւ լեզուն՝ չարախօսութիւնից, աչքը ցանկութիւնից եւ լսելիքը՝ շնանանալուց եւ բոլոր տեսակի արհամարհելի գործերից: Իսկ դու, որ արտաքուստ նմանում ես հրեշտակներին, սակայն վարքով դեւերին՝ քեզ ո՞ւմ թւում պիտի կարգեմ, հրեշտակների՞, թէ՞ դեւերի:

Սովորի՛ր պահք պահելու օրէնքները, որպէսզի քեզ մօտեցնի Աստծուն, դասակից ու համապատիւ անի հրեշտակներին, որպէսզի մեղքերի պատճառով հեռու չմնաս այն ճաշակելուց ո՛չ ձեռքերով, ո՛չ սրտով, ո՛չ լեզուով, ո՛չ ականջներով, նաեւ որովայնով, միայն հաց ու ջրով մեղմես քաղցը, մնաս քաղցած, քանզի նման կերպ սրբրուած մարդու մէջ բնակւում է Աստուած:

Պահքը անուշ խոնարհութիւն է բերում, քանզի այն մայրն է բոլոր բարիքների: Խոնարհութիւնը թող քեզանից հեռու չլինի, այլ աղի պէս

խառնի՛ր պահքի պնդութեանը, որպէսզի արժանի լինես արքայութեան ճաշին մասնակցելու եւ կերակրուելու եւ գեղեցկապէս յագենալու մեր Տէր Յիսուս Քրիստոսով:

Նորից եմ ասում, չպէ՛տք է զանց առնել խոնարհութիւնը, քանզի եթէ խոնարհութիւն ունես քո մէջ, քեզանից երբէք չի պակասի արդարութեան շնորհը, որովհետեւ Տէրը բնակւում է բոլոր նրանց մէջ, ինչպէս ասւում է՝ «Ուշ դարձրեց նա խեղճերի ու խոնարհների աղօթքին եւ չարհամարհեց խնդրանքը նրանց» *(Սաղմ. 101. 16)*: Ու նաեւ՝ «Տէրը նրանց կողքին է, ովքեր սրտամաշ են եղել, եւ նա փրկում է հոգով խոնարհներին» *(Սաղմ. 33. 19)*:

Խոնարհութիւնն ու արդարութիւնը զգուշութեամբ պահպանում են մարդուն, եւ չարը նրան չի մերձենում:

Սիրե՛նք խոնարհութիւնը, արդարնե՛ր եւ մեղաւորնե՛ր, քանզի երկուսիդ համար էլ այն զարդ է, արդարին պահպանում է, մեղաւորին՝ փրկում:

Ատե՛նք ամէն տեսակի ամբարտաւանութիւն, որ մայրն է բոլոր չարիքների, որ անգամ սատանային անմիջապէս զցեց փառքից:

Սովորե՛նք խոնարհութիւն Քրիստոսից, որ ծառայի կերպարանք ընդունեց եւ աշակերտների ոտքերը լուաց ծառայական կերպով, եւ անմիջապէս հանգստութիւն կը գտնենք մեզ համար, քանզի «Ով իր անձը բարձրացնում է, կը խոնարհուի. եւ ով խոնարհեցնում է իր անձը, կը բարձրանայ» (*Մատթ. 23. 12)*՝ ի Տէր մեր Քրիստոս Յիսուս, որին փառք յաւիտեանս:

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այնտեղ հոգիները կ՚ունենան անվախճան կեանք՝ զերծ ամէն տեսակի հոգսերից:

Իրական հանգիստն այն է, երբ չկան ցաւեր ու տրտմութիւն, երբ հոգսեր չկան եւ ոչ էլ չարչարանքներ ու կասկած, որը չի ալեկոծում կամ քայքայում միտքը, բայց ուր միայն Աստծոյ երկիւղն է, որ լի է խնդութեամբ:

Այնտեղ երեսի քրտինքով չեն հացը վաստակում, եւ ոչ էլ փուշ ու տատասկ կայ, այնտեղ չկան

ցաւեր ու հեծեծանքներ, այլ միայն՝ խնդութիւն ու խաղաղութիւն, բերկրանք ու բարութիւն ու հեզութիւն:

Այնտեղ չկայ նախանձ ու չարակնութիւն, չկան ցաւեր ու մահեր ոչ մարմնի եւ ոչ էլ հոգու:

Այնտեղ չկայ խաւար եւ կամ գիշեր, այլ մշտապէս ցերեկ է եւ լոյս:

Այնտեղ վաստակել կամ յագենալ չկայ, այլ մշտապէս ցանկալի բարիքների մէջ լինելով՝ կվայելես բոլոր կարիքները:

Կամենո՞ւմ ես, որ այդպիսի կեանքի օրինակ բերեմ, թէեւ մեր տկար մտքի համար դժուար է դա անել: Նայեցէ՛ք երկնքին, երբ օդը մաքուր ու յստակ լինի՝ տեսանելի կը լինի նրա պայծառ պսակը եւ վայելուչ տեսքն ու գեղեցկութիւնը: Եւ ապա ակնապիշ նայեցէ՛ք գետնին. երկնքի պարզութիւնը չունի այն, բայց նման է կաւեղէն յարկերում պահուող գեղեցիկ ոսկեղէնի: Եւ դարձեալ վեր՝ երկնամած հրեշտակների ու հրեշտակապետերի անչափ գունդերի անմարմին զօրքերին նայեցէք: Բայց եւ Աստծոյ արքունիքի հայրենի Աթոռը չի կարող, ինչպէս ասել եմ, ամէն ինչ մեզ ցոյց տալ. փորձ է պէտք դրա համար, իսկ փորձի

միջոցով՝ իմացութիւն: Ինչպիսին որ կարծում ենք, թէ էր Ադամը դրախտում, նրանից առաւել է իր բնակութեան վայրը, ինչքան որ լաւն են երկինքն ու երկիրը:

Բայց կարող ես նաեւ մէկ այլ օրինակ խնդրել, ասենք թէ՝ ի՞նչ վիճակի մէջ է այն թագաւորը, որը տիրում է բազում աշխարհների, պատերազմներից ու հոգսերից ազատ է, շատ հարկեր է առնում ամենքից, մեծաքանակ ոսկի ժողովում, անուանի դառնում: Ուրեմն ի՞նչ է թւում ձեզ, ի՞նչ մտքեր կ'ունենայ նա եւ ի՞նչպէս կը զուարճանայ, երբ որ պատերազմները դադարած լինեն եւ երկիրը խաղաղութեամբ նրան ծառայելիս լինի: Ահա այդպիսին է այնտեղի հանգիստը:

Իսկ եթէ այս օրինակն էլ բաւարար չէ, ուրեմն լսի՛ր մէկ այլ օրինակ: Տե՛ս, երբ արքայորդի մի մանուկ դեռեւս մօր որովայնում լինի, թագաւորական պատուի արժանացած չի լինի, բայց երբ աշխարհ գայ եւ արքայական աթոռի հասնի՝ ոչ թէ դանդաղ, այլ անմիջապէս ամէնն իր ձեռքի տակ կ'անցնի: Այդպիսի մի բան է նաեւ այն արքայութեան հանգիստը, եւ ոչ միայն այդպիսի, այլեւ բիւրապատիկ առաւել մեծ ու զարմանալի:

Կամ թէ՝ նման է մի կալանաւորի, որ բանտում բազմաթիւ վշտեր կրած լինի ու յանկարծակի թագաւորական աթոռի հասնի:

Բայց այս օրինակները չեն կարող ստուգապէս պարզել վերնային հանգիստը, քանզի եթէ այս աշխարհում որեւէ մէկը հասնի բարիքի, թէկուզ եւ թագաւորութեան, առաջին օրը ցանկութիւնը պայծառապէս կը կատարուի, ապա երկրորդ օրը, երրորդ օրը, իսկ երբ ուրախութեան մէջ անցկացնելով ժամանակը առաջ շարժուի, այլեւս այնքան հանգստութիւն չի զգայ, քանի որ այն օրեցօր սովորական կը դառնայ: Մինչդեռ այնտեղ ոչ միայն չի նուազի, այլեւ աստիճանաբար առաւել կ'աճի:

Եւ ուրեմն՝ տե՛ս, թէ ինչպիսի՞ն կը լինեն այն հոգիները, որ գնում են վեր, ուր չեն ունենայ բարիքների նուազման ակնկալիք, ուր չի լինի եղծում կամ այլայլում, այլ միշտ լիացած կը լինեն եւ կ'ունենան անվախճան կեանք՝ զերծ ամէն տեսակի հոգսերից, տրտմութիւններից, ուր լիացած կը լինեն ուրախութեան եւ բազմապատիկ բարիքների մէջ: Քանզի այս աշխարհում երբ մի դաշտ դուրս գանք ու այնտեղ տեսնենք

արքունի զօրքը բանակ դրած, վրաններ ձգած ու ամրացած, ուր գեղարդները շողշողալիս լինեն, վահաններով շրջապատուած ու դրօշներով ծածանուած, շատ կը հիանանք ու զարմացած կը մնանք: Իսկ ի՞նչ, եթէ թագաւորին տեսնենք այս ամէնի մէջ կամ նրա հետ ընթացող ոսկեկուռ վահանաւորներին, կամ թէ ձի վարգող ոսկե զէնքով զինուորներին ու ականակապ զարդերով երիվարներին...

Ինձ թւում է, որ անհնար է այդպիսի բարիքներից առաւել մեծը պատկերացնել ու տեսնել: Բայց այս ամէնը տեսնելու համեմատ ի՞նչ կը զգաք, երբ առաւելեւս վերին սուրբ խորանները եւ յաւիտենական յարկը տեսնէք: Կ'ընդունեն, ասում է, ձեզ յաւիտենական յարկը, երբ այնտեղ տեսնէք արեգակից առաւել պայծառ ճառագայթող մէկին, այն էլ՝ ոչ թէ պղնձի կամ երկաթի, այլ փառքի՛ ճառագայթումից, որի փայլատակումը մարդու աչքը ի վիճակի չէ տեսնելու:

Իսկ ո՞վ կարող է պատմել հազարաւոր հրեշտակապետերի եւ բիւրաւոր հրեշտակների ու Քերովբէների, Սերովբէների, աթոռների, տէրութիւնների, պետութիւնների ու իշխանութիւնների

մասին, որոնց երանգներն անսահման են եւ որոնց բոլորին անհնար է մտքովն իսկ անցկացնել: Մինչեւ ե՞րբ պէտք է յապաղենք անհասին հետեւելուց, ինչպէս որ գրուած է՝ «Այն, ինչ աչքը չի տեսել, ականջը չի լսել եւ մարդու սիրտը չի ընկել, պատրաստել է Աստուած իր սիրելիների համար» (*Ա Կորնթ. 2. 9):*

Իսկ եթէ այս այսպէս է, ուրեմն չկայ աւելի ողորմելի մէկը այն մարդուց, որ կը հրաժարուի դրանցից, եւ չկայ առաւել երանելի մէկը այն մարդուց, որ դրան հասած կը լինի: Եւ արդ՝ լինե՛նք մենք երանեալ, որպէսզի հասնենք յաւիտենական բարութիւնների ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, որին փառք յաւիտեանս:

Ամէն:

ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԵՐԿԵՐԻ ՀԱՅԵՐԷՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին ըստ Յօհաննու, Կ. Պոլիս, 1717:

2. Ներբողեանք (նուիրուած Գրիգոր Լուսաւորչին), Կ. Պոլիս, 1734:

3. Պատմութիւն Վարուց Յովհան Ոսկեբերանի (հայերէն է թարգմանել Գրիգոր Բ Վկայասէր կաթողիկոսը), Վենետիկ, 1751:

4. Հատընտիր գիրք և ճառք և ներբողեանք, հատոր 1-2, Վենետիկ, 1818:

5. ՅԱւետարանագիրն Մատթէոս (մեկնութիւն Մատթէոսի Աւետարանի), գիրք 1-2, Վենետիկ, 1826:

6. Յովհաննէս Ոսկեբերան / Եփրեմ Խուրի Ասորի, Մեկնութիւն Գործոց Առաքելոց, Վենետիկ, 1839:

7. Ճառ ԼԴ, Վիեննա, 1855:

8. Ճառք, Վենետիկ, 1861:

9. Մեկնութիւն Թղթոցն Պօղոսի, հ. 1-3, Վենետիկ, 1862:

10. Երանելւոյն Յովհաննու Ոսկեբերանի Ներբողեան ասացեալ յաղագս վարուց եւ նահատակութեան Սրբոյն Գրիգորի, Վենետիկ, 1878:

11. Մեկնութիւն Եսայի մարգարէի, Վենետիկ, 1880:

12. Ասոյթներ Աստծոյ և հաւատքի մասին, Երևան, 1998:

13. Ներբող Սբ. Գրիգոր Լուսաւորչին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1999:

14. Ճառերի ընտրանի (թարգմ. ռուսերէնից), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2007:

15. Ճառք. Ի մեկնութեանց Սուրբ Գրոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2008:

16. Ճառեր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2009:

17. Ճառերի ընտրանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2015:

«Ոսկեղենիկ» մատենաշարով
հրատարակութեան նախապատրաստուող
հատորներ

1. Կարապետ Արք. Պալատեցի, Մեծ Պահքի քարոզներ
2. Յակոբ Նալեան, Առաքինութեան ուղին
3. Սբ. Բարսեղ Կեսարացի, Նայի՛ր ինքդ քեզ
4. Յովհան Արք. Տէրտէրեան, Քարոզներ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՍՐՏԻ ԽՕՍՔ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ.....3
ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԵՒ «ՈՍԿԵՂԵՆԻԿ»
ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՄԱՍԻՆ.....5
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՂՔԱՏՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.....11
ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.....32
ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՁՂՁՈՒՄԻ ՄԱՍԻՆ.....48
ՉԿԱՅ ՈՐԵՒԷ ԲԱՆ, ՈՐ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆԸ ՎՆԱՍ
ՊԱՏՃԱՌԻ.....68
ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ...77
ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ, ՊԱՀՔԻ ԵՒ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ.....88
ՊԱՀՔԻ ԵՒ ԱՂՕԹՔԻ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ.....104
ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....112
ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՀԱՅԵՐԷՆ ՏՊԱԳԻՐ
ԵՐԿԵՐ.....118
«ՈՍԿԵՂԵՆԻԿ» ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱՏԵՍՈՒԱԾ ԳՐՔԵՐ.....120

Սբ. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

Ապաշխարութեան պտուղներ
(Քարոզներ եւ Ճառեր)

St. John Chrysostom - The Fruits of Repentance
(Sermons and Homilies)

ԱՄՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
«ՈՍԿԵՂԵՆԻԿ» ՄԱՏԵՆԱՇԱՐ
-Ա-

ԼՈՍ ԱՆՋԵԼԷՍ, 2019

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ